

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել կրուժը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա կրուժը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8477

Ա. Ա. ԳՐԱԳՐԱՆ

ՄԱՐԺՍ - ԼԵՆԻՆՅԱՆ
ԴԱՍՏԻՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



3KՈ4
Ա-20

ՅԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1932

01. 2013

8471

А. Адоян—Основные вопросы марксистско—ленин-
ского воспитания
Издательство ЦК КП (б) А.—Партиздат
Эривань 1932 г.

Հայպոլիգրաֆի տպարան
Գլավիթա 7653 (Ե)
Հրատարակ. № 19
Պատվեր № 2794
Տիրած 5000

Արբանյակ Լ. Արսլյան
Հանձնված է արտադրության 19 ոգոստոսի 1932 թ.
Ստորագրված է տպելու 4 սեպտեմբերի 1932 թ.

ՄՍՐԲՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ԳՍՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԸ*)

ԸՆԿԵՐՆԵՐ :

Համամիութենական կոմկուսակցության 17-րդ կոն-
ֆերենցիան, վերը համաշխարհային պատմության մեջ մտադ
իրև սոցիալիզմի կառուցման կարևորագույն մի ետապ —
մեր կուսակցության, բանվոր դասակարգի և վոլջ աշխա-
տավոր մասսաների առաջ դրեց վիթխարի նշանակություն
ունեցող մի խնդիր՝ անդասակարգ սոցիալիստական հասարա-
կաբյուռ կերտելու խնդիրը :

17-րդ կոնկոնֆերենցիան մարքս-լենինյան սպարզ և
բազմակողմանի գնահատական տարով մեր զարգացման ըն-
թացքում կատարված սոցիալ-անտեսական հսկայական տե-
ղաչարժերին, կոնկրետ և հստակ կերպով ուրվագծեց յերկ-
րորդ հնգամյակում մեր առաջխաղացման ուղիները, ուղի-
ներ, վորոնք մեզ տանում են դեպի դասակարգերի լիկվիդա-
ցիան դասակարգային պայքարի և պրոլետարիատի դիկտա-
տուրայի ամրացման հսկում, վորով ապահովելու յեկ «ամ-
բողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման ավար-
տումը, նորագույն տեխնիկական բազայի ստեղծումը ժողո-
վրդական տնտեսության բոլոր բյուզերի համար» : (Կոնֆ.
բանաձևից) :

Այսօրինակ անտեսական թռիչքը մեզ հնարավորություն
և տալիս վոչ միայն հաջողությամբ իրագործելու «կապիտա-
լիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի լիկվի-
դացիան», այլև միլիոնավոր մասսաների ըաղաքական կադ-

*) Զեկուցում արված կուլտ-պրոև և ագիտ-մաս բաժվորների
հանրապետ. խորհրդ. 1932 թ. 25 հուլիսի :

մակերսպվածութեան, ակտիվութեան հսկայածափալ աճման և նրանց կուլտուր-կենցաղային հարաճուն վերելքի հիման վրա» հաղթահարել կապիտալիզմի մնացորդները եկոնոմիկ-կայի և մարդկանց գիտակցութեան մեջ»:

1. ԲԱՅԼՇԵՎԻԿՈՐԵՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿՈՒԼՏ-ՊՐՈՊ ՀԱՏՎԱԾԸ

Հայտնի յե բոլորին, վոր այդոր կուսակցութեանը առանձնակի սրութեամբ և իր ծավալով մեկ մեր առաջ դնում և կուսակցութեանը սրութեամբ, մասսայական դաստիարակչական աշխատանքների վերակառուցման խնդիրը: Վերակառուցման անհրաժեշտութեանը մեզ թելադրում են զարգացման տվյալ շրջանի նոր պայմանները և նոր խնդիրները: Այս անսակիտից, կուլտուրային և ազիտ-բարձրացման սույն խորհրդակցութեանը պետք է հանդիսանա մի շրջադարձի մոմենտ մեր գործունեութեան ավելի բարձր աստիճանի վրա դնելու համար:

Այսոր, սոցիալիստական շինարարութեան ասպարեզում մեր առջև դրված հետագա խնդիրները,—ասում է ընկ. Կազանովիչը,—մեզինց պահանջում են ե՛լ ավելի բարձր աստիճանի հասցնել ամբողջ կուսակցական աշխատանքը, դրանք ավելի մեծ պահանջներ են առաջադրում մեր վողջ կուսակցական աշխատանքի նկատմամբ:

Տակափին վոմանք հակամետ են կարծելու.—անգամ կուլտուրայի աշխատողներին,—թե աշխատանքների վերակառուցումը գերադանցապես վերաբերում է միայն կուսակցութեանը և ֆրոնտի աշխատողներին, ազիտ-մաս աշխատողներին և աննշան չափով կուլտուրայի աշխատողներին: Ի՛նչ խոսք, վոր նման արամադրութեան առկայութեանը պետք է խստորեն քննադատվի մեր կողմից իբրև սխալ և վտանգավոր յերևույթ: Սակայն, մյուս կողմից, կուսակցական աշխատանքների վերակառուցման նման մեխանիստական պատկերացումը վկայում է այն, վոր կուսակցական աշխատանքների ընդհանուր շղթայի կալտուրայի ոգակը դեռևս բույլ է վերակառուցվում:

«տանքների ընդհանուր շղթայի կալտուրայի ոգակը դեռևս բույլ է վերակառուցվում»:

Սոցիալիզմի սխալ կլիներ անջատել կուսակցական կազմակերպական աշխատանքը մասսայականից, կուլտուրայի աշխատանքը կազմակերպականից: Այս ամենը կապված են միմյանց անքակտելի կապերով, նրանք բղիթում են մեկը մյուսից, միմյանց պայմանավորում են փոխադարձաբար: Սակայն անհրաժեշտ է շիտակ և պայծառ պատկերացում ունենալ կուսակցական աշխատանքի տարբեր բնագավառների յուրաքանչյուր խնդիրների, այդ խնդիրների կենսագործման յուրաքանչյուր և բնորոշ ճանաչում և մեթոդների մասին: Մենք պետք է մի կողմ վանենք այն «կազմակերպչական» մոտեցումը, բայց վորը կուսակցական կազմաբաժինները վերակառուցում են կազմակերպչութեանը կազմակերպչական տեսանկյունից, իսկ կուլտուրային ու ազիտ-մասնավորները պետք է «կազմակերպչական» այդ կեղևը լցնեն բովանդակությամբ: Նման մոտեցում կուսակցական աշխատանքների տարբեր ուղիների փոխհարաբերութեանը վողջ մի կապ չունի բայց չեիզմի հետ:

Ինչպես միշտ, նույնպես և այսոր, կուսակցական կազմակերպական, մասսայական և կուլտուրայի աշխատանքները կազմում են մի ամբողջութեան բաղկացուցիչ մասերը: Ուստի և վերակառուցման խնդիրը վերաբերում է կուսաշխատանքների բոլոր բնագավառներին:

«Մենք պետք է կարողանանք բ՛լիճների աշխատանքը նախ և առաջ այնպես վերակառուցել, վորպեսզի գտնվենք մեր առջև դրված խնդիրների բարձրութեան վրա՝ ղեկավարել մասսաներին, կազմակերպել նրանց կուսակցութեան լոգոնցների շարքը, պայքարելու մեր առջև դրված խնդիրների իրականացման համար»:

(Կազանովիչ):

Հենց այս տեսանկյունից էլ պետք է մոտենանք նաև կուլտուրայի աշխատանքներին, մարքսիզմ-լենինիզմի մասսայական պրոպագանդի արդի վիճակի և կուսակցական հեր-

թական անելիքներին: Կարևորն այն է, վոր մարքս-լենինյան մասսայական պրոպագանդը, մեր վողջ կոմունիստական կրթությունը ողնի կուսակցությանը «բարելավելու յուրաքանչյուր առանձին բանվորի նկատմամբ մեր կատարած աշխատանքը և իրապես սպասարկել նրան նրա պահանջներին բավարարելու համար»: Այս մեկնակետից ել մենք պետք է ղնահատենք կուլտ-պրոպ, ագիտ-մաս բաժինների, պրոպագանդիստների և ագիտատորների տարած աշխատանքը կուսուսուցման ասպարեզում:

Սոցիալիզմի կառուցման բնագավառում մեր ձեռք բերած նվաճումները վիթխարահալա չեն: Կուսակցությունն ի մի ամփոփելով իր յերեսունից ավելի տարվա բայլչեկիքան անհատ պայքարի արդյունքները, համոզված կերպով հաստատարում է, վոր «ԽՍՀՄ վերջնականապես հաստատվել է սոցիալիզմի նախադրիսին, հետևաբար և սոցիալիզմի լիակատար հաղթանակը մեզ մոտ ապահովված է»: Բայց այս անյերկրայելի ճշմարտությունը չի դալիս ասելու, վոր յերկրորդ հնգամյակում մենք առաջ ենք սուրալու «խողաղ» և «սահուն» կերպով, ինչպես պնդում են սոցիոտունիստները: Այսոր մենք պետք է կրկնապատկենք մեր ջանքերը հնգամյակի ավարտական տարվա պլանների կատարման համար, մեր առաջխաղացման ուղիներին կանգնած զժվարությունները սովորությամբ հաղթահարելու, մենք պետք է ավելի հատու դարձնենք մարքսիզմ-լենինիզմի գեներերը այսոր և յերկրորդ հնգամյակում մեզ սպասող դասակարգային մարտերի համար: Մենք պետք է աննախընթաց աշխատանք ծախայենք, վորպեսզի ստեղծենք բոլոր նախադրյալները մարդկանց գիտակցությունից և եկոնոմիկայից կապիտալիզմի մնացորդները հաղթահարելու և լիակատար սոցիալիստական հաստարակակարգ ստեղծելու համար:

Վաղուց է հասել ժամանակը, վորպեսզի իդեոլոգիական ֆրոնտի աշխատողներս լիովին և մինչև վերջը վերակառուցենք մեր աշխատանքները կուսակցության առաջ ծառայած

նոր խնդիրների համեմատ: Մեր առաջ խնդիր է դրված «կարողանալ այնպես ճիշտ կազմակերպել աշխատանքը, վորպեսզի հետ չմնանք, վալ ժամանակին լուծենք տեղի ունեցող բազյումները» (Լենին): Լենինի այս պահանջը մենք պետք է իրագործենք լիովին և ամենակարճ ժամանակում:

2. ԱՆՆԿՈՒՆ ՅԵՎ ՀԱՐԱՏԵՎ ՊԱՅՔԱՐ ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ԹԵՈՐԻԱՅԻ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԹԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԵՍ

Կուսակցական, կոմյերիտական և անկուս աշխատավորական մասնաներին մարքսիզմ-լենինիզմի վողով դաստիարակելու, նրանց սոցիալիզմի կառուցման ուղղությամբ գիտակցորեն տողորելու գործում՝ մենք ունենք հսկայական նվաճումներ, վորոնց վրա յես կանդորադառնամ քիչ հետ: Մակայն այստեղ կուպենայի ձեր ուշադրությունը սեեռել ահա թե վորպիսի մի «հին» խնդրի վրա:

Այդ մեր բայլչեկյան պայքարն է մարքս-լենինյան թեորիայի, մասնաների կոմունիստական դաստիարակության գերի ու նշանակության ուլորտունիստական քերագնահատման դեմ:

Դեռ անցյալ տարի, կուլտ-պրոպ և ագիտ-բաժվարների հանրապետական խորհրդակցությանն արտատանած իր ճառում լենի. Ա. Սանժյանը հանդամանորեն նչեց այդ պայքարի հույժ կարևոր բնույթը: Այն ժամանակ ընկ. Սանժյանն ասում էր.

«Հիմնականն այստեղ այն է, վորպեսզի կուսկազմակերպությունն անմիջապես արմատախիլ անի կուսուսուցման քերիայի քերագնահատման ամեն մի փորձ մեր շարքերում: Մեզ մոտ վատ սովորություն է դարձել ամեն տեղ և ամեն առթիվ նստել և խոսել քերիայի և կուսուսուցման նշանակության մասին. գործնականում այդ ուղղությամբ վոչինչ չանելով հանդերձ»:

Արված է այս կարևոր բայլը բարձր կուսկազմակերպու-

թյունների կողմից, անց մեկ տարի: Վո՛չ, չի՛ արված: Դեռ ավելին. ընթացիկ տարում մենք ականատես ենք այնպիսի փաստերի, յերբ չըջանային միջանի կուսկազմակերպություններ շարունակում են իրենց ուղորտունիստական վերաբերմունքը (Ղամարլու, Վեզի) դեպի մարքս-լենինյան թեորիան և այդ ուղորտունիզմը միջանի ողակներում ուղղակի տապալել և մասսաների կոմունիստական դաստիարակության կարևորագույն աշխատանքը:

Առանց սխտեմատիկ և հետևողական պայքար մղելու կուսակցական անմիջական աշխատանքների և մարքս-լենինյան թեորիայի թերազնահատման դեմ, — զժբախտաբար այդ թերազնահատումը յերբեմն արտահայտվում է իրենց կուլտպրոպ աշխատողների մոտ. այլ կերպ չի կարելի բացատրել այն իրողությունը, յերբ Ղամարլուի կուլտպրոպը միաժամանակ վարում է առբաժնի վարչի աշխատանքը և բառիս բուն իմաստով տապալել է այդ չըջանի կուսուսուցման գործը, — մենք չենք կարողանալու կուսակցական ընկերների տեսական ուսուցումը դնել պատշաճ բարձրության վրա:

Մի՞թե գաղտնիք է, վոր մի շարք կուսակցական չըջանային կոմիտեներ և բջիջներ 1932 թ. հունվարից մինչև որս և վո՛չ մի անգամ չեն զբաղվել կուսկրթության հրատապ հարցերով: Միայն ՀԿ (բ) Կ Կենտկոմի բյուրոյի վորոշումից հետո (Վաղպատի կուսակցական ուսուցման մասին) այդ չըջաններն սկսեցին ստուգել իրենց կուսակցական ուսուցման, լենինիզմի սլոյազանդի ասպարեզում:

Այստեղ անհրաժեշտ է վերստին ընդգծել Լենինի և կուսակցության ղեկավար ընկ. Ստալինի բացառիկ վերաբերմունքը դեպի թեորիան: Անդրադառնալով թեորիայի թերազնահատման խնդրին՝ ընկ. Ստալինը գրում է.

«Հայտնի չէ նույնպես, վոր ժամանակակից պրակտիկ լենինյանները շատերն այնքան ել չեն սիրում թեորիան, հատկապես այն հսկայական գործնական աշխատանքի պատճառով, վորն ըստ իրենց գրության նրանք ստիպված են տանել: Յես պետք է հայտարար-

րեմ, վոր պրակտիկ աշխատողների ձգտումը՝ մի կերպ վանել իրենցից թեորիան՝ հակասում է լենինիզմի ամբողջ վագուս և հզի յե շատ մեծ վտանգներով ընդհանուր օւրծի հավար. վոչ այլ վոք, յեթե վոչ Լենինն էր, վոր բազում անգամ ասում և կրկնում էր հայտնի դրույթն այն մասին, թե՛ «առանց հեղափոխական թեորիայի չի կարող լինել նաև հեղափոխական շարժում»: Լենինն ավելի, քան այլ վոք, հասկանում էր թեորիայի կարևոր նշանակությունը, առանձնապես մի այնպիսի կուսակցության համար, ինչպիսին է մերը: Նախատեսելով մեր կուսակցության այդ առանձնահատուկ դերը, — շարունակում է ընկ. Ստալինը, — դեռ 1902 թ. Լենինը կարևոր էր համարել հիշեցնել, վոր «առաջավոր մարտիկի դերը կարող է կատարել միայն այն կուսակցությունը, վորը ղեկավարվում է առաջավոր թեորիայով»*):

Ահա թե վորպիսի խոշոր նշանակություն են տալիս թեորիային Լենինը և նրա լավագույն աշակերտ ընկ. Ստալինը: Յեվ ահա թե վորպիսի վտանգավոր քայլ են կատարում այն ընկերները, վորոնք տարվելով նեղ գործամոլությամբ, մոռացության են տալիս միշտ վառ պահել մարքս-լենինյան թեորիայի անմար ջահը:

Յերկրորդ հնգամյակի պատմական խնդիրները, կուսակցական աշխատանքի վերակառուցման տվյալ ետպն ավելի քան շեշտակիորեն են դնում մասսաների կոմունիստական դաստիարակության խնդիրը: Բավական է վերցնել միայն յերեք հանգուցային հարցեր, վորպեսզի մի ավելորդ անգամ մեզ համար պարզ լինի թեորիայի և թեորետիկական-քաղաքական ուսուցման խիստ կարևորությունը: Յես ինկատունեմ.

1. Վողջ ժողովրդական անտեսության սոցիալիստական վերակառուցման ավարտումը յերկրորդ հնգամյակում:

* ի. Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 23—24:

2. Դասակարգերի լիկվիդացիան և ապա ուրեմն անդատա-
կարգ հասարակութան կերտումը :

3. Կապիտալիզմի մնացորդները հաղթահարումը վոչ մի-
այն եկոնոմիկայի, այլև մարդկանց գիտակցութեան մեջ :

Այստեղից ել ըզխում է այն բացառիկ դերը, վորը վիճակ-
ված է կատարելու լենինիզմի պրոպագանդին ու ազի-
տացիային, մասսաները կոմունիստական կրթութեանը : Ել
չեմ խոսում այնպիսի կարևոր հարցերի մասին, վորպիսին
է խորացրած և համառ պայքարը 2-րդ Ինտերնացիոնալի
զաղափարախոսութեան, Դաշնակցութեան և ամեն տեսակի
նացիոնալիզմի, աջ ոպորտունիզմի, հակահեղափոխական
տրոցկիզմի, փոսած լիբերալիզմի և «ճախ» խոսորումները ու
այլ կարգի հակալենինյան, հակապրոլետարական զաղափա-
րախոսութեանները և «թեորիաները» դեմ :

Անհրաժեշտ է վնասակոն պայքար մղել բյուրոկրատիկ
այն անփութութեան դեմ, վոր ցուցաբերվում է բայլշևիկյան
ագիտացիայի ու պրոպագանդի և մասսաների մեջ կատարվող
բաղաճական աշխատանքին : Ազիտացիան և պրոպագանդը
պետք է զբված լինի շատ ավելի սխտեմատիկ և կազմա-
կերպված հիմքի վրա, — ասում է ընկ. Կազանովիչը : Այս
բանը կատարելու համար մենք ունենք բոլոր անհրաժեշտ
նախադրյալները : Վոզջ խնդիրն այն է, վոր մենք սովորենք
ճշտորեն ոգտագործել մեր հնարավորութեանները նաև
մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդի բնագավառում :

Այսպես ուրեմն : Մենք պետք է պահանջենք բոլոր կուս-
բջիջներից և կազմակերպութեաններից, վորպեսզի «բան-
վոր դասակարգի նոր կադրերի, կուսակցական կազմակեր-
պութեան հազարավոր նոր անդամների կուսուսուցման և դաս-
տիարակութեան գործը դրվի առաջին պլանի վրա»

(ԽԱՆՋՅԱՆ) :

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՄԱՐՔՍԻԶՄ — ԼԵՆԻՆԻԶՄԻ
ԱՆԱՂԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ՝ ՀԱՆՈՒՆ ԹԵՈՐԻԱՅԻ ՈՒ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ

Յես արդեն վերևում մատնանշեցի, թե վորպիսի վասն-
զավոր քայլ են կատարում մեր այն «պրակտիկները», վո-
րոնք թերազնահատում են թեորիան, վորոնք աշխատում են,
պրակտիկան «կուրորեն շոշափելով» : Այդ թեորիայի խզումն
է պրակտիկայից այսպես ասած «պրակտիկները» կողմից :
Սակայն մենք չենք կարող աչք փակել իրողութեան մյուս
կողմի հանդեպ, չենք թեորիան անջատվում է պրակտիկա-
յից այսպես ասած «թեորետիկները» կողմից : Այսպիսի փաս-
տով հարուստ է կուսակցական ուսուցման մեր պրակտիկան :
Մինչդեռ նման իրողութեանը խոսում է այն մասին, վոր մեր
պրոպագանդիստները և ազխատորները գործնականում աղ-
ճատում են հեղափոխական թեորիան և այն դաժճնում քա-
րացած ճշմարտութեանների և գողմանների մի ժողովա-
ծու :

Դուք գիտեք, վոր մեր կուսակցութեանը սկզբից եկի՞
բարձր պահելով մարքսիզմ-լենինիզմի գրոշը, սերտորեն
այն կապակցել է բանվոր դասակարգի հեղափոխական պրակ-
տիկայի հետ : Մեր թեորիան ծագել է հարստացել է միմիայն
հեղափոխական դասակարգային պայքարի պրակտիկայի հի-
ման վրա, լուսավորելով վերջինս գիտութեան ջահով : Առա-
ջանալով «քննական հեղափոխական իրականութեանից»,
մարքսիզմ-լենինիզմը միշտ ել կուսակցի ու նշել է պրակտիկ
չարժման անդեմները և ուղիները աշխարհը բացատրելու,
այլ նաև հեղափոխական մեթոդներով վերափոխելու համար
մեզ տվել է սեփականությունի մի գենք :

«Լենինն ասում եր, — գրում է ընկ. Ստալինը, — թե
«հեղափոխական թեորիան դոգմա չէ», թե «ևս վերջ-
նականապես ձևակերպվում է միայն սերտորեն կապ-
ված լինելով իսկական հեղափոխական շարժման պրակ-
տիկայի հետ», վորովհետև թեորիան պետք է ծառայի
պրակտիկային, վորովհետև «թեորիան պետք է պա-

տախտանի պրակտիկայի առաջադրած հարցերին», վորովհետև նա պետք է ստուգվի պրակտիկայի տվյալներով»:

Միայն այս կերպ մենք պետք է հասկանանք թեորիայի և պրակտիկայի ղեկավարիկական առնչությունը:

Այս իսկ սկզբունքային դրույթից յելնելով, մենք պետք է գծենք այն սահմանները, վորոնց մեջ կատարվելու յե լենինիզմի մասնաշաղկան պրոպագանդը: Այս տեսակետից մեր կուսուսուցման պրակտիկայում դեռ չատ բան մտած է «գրքային» վերամբարձ «թեորիայի» յեթերում: Ինչ այսոր էլ ունենք պրոպագանդիստներ, վորոնք շարունակում են ճախրել «մաքուր տեսության» կատարներում, մոռանալով, վոր նրանց պրոպագանդը տվյալ զեպղում դրոշի արժեք չունի:

Այսոր, ավելի քան յերբեք, անհրաժեշտ է, վոր մեր վոչ միայն պրոպագանդիստներն ու ազիտատորները, այլ նրանց անմիջական ղեկավար ազիտ-մաս և կուլտ-պրոպ-րատվարները գործնականում մարտեն մարքսիզմ-լենինիզմի այն մտական սկզբունքը, ըստ վորի

«Թեորիան, ինքնին, առարկայագուրկ է դառնում, յեթե նա չի կապվում հեղափոխական պրակտիկայի հետ, նիշտ այդպես էլ պրակտիկան կույր է, յեթե նա իր նախապահը չի լուսավորում հեղափոխական քեորիայով: Սակայն քեորիան կարող է բանվարական շարժման հսկայական ուժ դառնալ, յեթե նա գարգա-նում է անփակելիորեն կապված լինելով հեղափոխա-կան պրակտիկայի հետ, վորովհետև նա, և միայն սա կարող է հավատ ներշնչել շարժմանը, տալ կողմնորոշ-ման ուժ և շրջապատող դեպքերը ներքին կապերի ըմ-բռնումն, վորովհետև նա, միայն նա, կարող է ոգևոլ պրակտիկային հասկանալու վոչ միայն այն, քե ինչ-պես և ուր են շարժվում դասակարգերը ներկայումս, այլև ուր պետք է շարժվեն նրանք մտ ապագայում»:

*) Ի Ստալին, «Լենն հարցերը», էջ 23:

լենինիզմի այս սկզբունքն ընկած է կուսակցական ու-սուցման, մեր ամենուրյա պրոպագանդի և ազիտացիայի հիմքում: Հետևաբար, մենք պետք է այնպես կադրակերպենք գործը, վոր այդ հիմունքը չխախտվի: մենք պետք է պայ-քար մղենք այն պրակտիկայի դեմ, յերբ թեորիան անջատ-վում է պրակտիկայից: Մենք պետք է դատապարտենք Ար-թիկի շրջկոմի այն անհանդուրժելի անփութությունը, վոր-պիսին նա հանդես է բերել այդ ուղղությամբ: Յերկար ժա-մանակ այդ շրջանում մի կուսուսուցման միավոր իր բոլոր պարագմունքները նվիրել է նախնադարյան կոմունիզմի ու-սումնասիրության և այն էլ ըստ Տյոմենևի «Աշխատանքի պատմության»: Այս փաստ է, վորի նմանները կան անշուշտ նաև մյուս շրջաններում: Պետք է վերջ տալ այդ իրողությա-նը և կուսուսուցման յուրաքանչյուր մի քայլ կապել մեր ու-րերի, սոցիալիզմի կառուցման պրակտիկայի հետ:

Մարքսիզմը պրակտիկայում գոհակացնողներին Լենինը հաճախ ասել է. «մի ստորացնեք մեր հեղափոխական գիտու-թյունը մինչև սոսկ գրքի դոգմայի աստիճանը, մի գոհակաց-րեք այն զովելի փրագներով»:

4. ԶԻՆԵԼ ԿՈՄՈՒՆԻՍՏԻՆ, ԿՈՄՅԵՐԻՏԻՆ, ԲԱՆՎՈՐԻՆ ՅԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՇԽԱՏԱՎՈՐԻՆ ՏՎՅԱԼ ԵՏԱՊԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԽՈՐ ԸՄԲՌՆՈՒՄՈՎ

Ասածներինցս պարզ է, վոր կուսակցական ուսուցումը, լենինիզմի ազիտացիան ու պրոպագանդն ինքնամիտի և ինքնանպատակ չեն: Ինչպես միշտ, այսոր էլ նա ծառայելու յե մեր սոցիալիստական պրակտիկային, լուսավորելով և ի-մաստավորելով նրա ներքին կապերն ու զարգացումը:

Հետևաբար, մարքս-լենինյան դաստիարակության խրն-դիրները քննելիս մենք պետք է յեյնենք այն ետապի ա-ռանձնահատկություններից, վորը մենք սպրում ենք այ-սոր:

Վորն է զարգացման տվյալ ետապի առանձնահատկու-թյունը: Այն, վոր կուսակցությունը վերակառուցում է իր

աշխատանքները, սոցիալիզմի կառուցման նոր պայմանների և նոր խնդիրների համեմատ: Այն է, վոր մեր բոլոր ձեռնարկումները պետք է իրականան մի կիլոպե-տում. այնպես զնեղ գործը, վորպեսզի ոգնենք կուսակցու-թյանը և իշխանությանը, ամենակարճ ժամանակամիջոցում ուժերի և միջոցների միջխմալ վատնումով, տնտեսական-տեխ-նիկական տեսակետից հասնենք և անցնենք առաջավոր կա-պիտալիստական յերկիրներին:

Այս մեծագույն և գլխավոր խնդրի կենսագործման շուր-ջը պետք է դառնա լենինիզմի պրոպագանդը և կուսակցու-կան ուսուցման ցանցի գործունեությունը: Այս ուղղությամբ պետք է ընթանա և այդ հիմնական խնդրին սուրբազրվի մեր մասսայական ազիտացիան ու պրոպագանդը: Չհասկանալ այս՝ նշանակում է հետ մնալ մեր դարդացման թռիչքից:

Մարքս-լենինյան դաստիարակության առանցքը պետք է կազմի՝ զինել յուրաքանչյուր կուսակցականին, կոմյերիտա-ցանի և բանվորի ու կոլանտեսական աշխատավորներին սո-ցիալիզմի վերջնական հաղթանակի համար մղվող պայքարի ներկա և տապի առանձնահատկությունների խոր և հստակ բմբունումով, գլխավորելով մասսաների կուլտուր-քաղաքա-կան, աշխատանքային վերելքը յերկրի ինդուստրացման և հետագա զարգացման գործում:

«Պետք է դադարակարական մեծ բարձրության հասց-ներ մեր ամբողջ քաղաքական և մասսայական աշխա-տանքն այնպես, վոր յուրաքանչյուր տվյալ պահին հնարավոր լինի պարզ և հասկանալի ձևով, առանց սուր հարցերից խուսափելու, պատասխանել բանվորին հույսով հարցերին, գործելով բայլչեիկյան մեթոդով, համոզելով և դաստիարակելով յուրաքանչյուր առան-ձին բանվորին»: (կազանովիչ):

Այս բոլորին զուգընթաց մենք պետք է գամբյուրը նե-տենք պրոպագանդի և ազիտացիայի «տրաֆարետ փոճի-սկսած շարուն ճառերից»:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԾ ՊԱՅՔԱՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ—ԿՈՄՈՒՆԻՏ-ՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԻԹԵԱՐԻ ԴԱՐԲ-ՆՈՑՆ Ե

Վերջին տարիներում մեր յերկրի ներսում առաջ յեկան սոցիալ-տնտեսական արմատական տեղաշարժեր: Հսկայա-կան չափով աճել է բանվոր դասակարգը ի հաշիվ նոր յերի-տասարգ կազրերի, վորոնց նշանակալի մասը յեկել է դյու-դից, վորոնց մեջ կան կուլակային տարրեր, նրանց մեջ կան բանվորներ քաղաքային մանր բուրժուազիայից: «Սրանց պետք է դաստիարակել և կոփել պրոլետարական սոցիալիզմի վոգով: Յեկ վերջապես կան այնպիսի առանձին տարրեր, վո-րոնց անհրաժեշտ է մերկացնել», ասում է ընկ. Կազանովիչը:

Ահալին չափերով աճել է նաև մեր բայլչեիկյան կուսակ-ցությունը, կոմսոմոլը: Մեկ տարվա ընթացքում Հայկոմ. (ր) կուսակցությունը 19,079 հոգուց հասել է 22,198 հոգու առ մեկն ապրիլի 1932 թ.: Այս յերեք հազարից ավելի նոր ընդունվածները ճնշող մեծամասնությամբ յերիտասարգ-ներ են, վորոնք չեն անցել կապիտալիստական գործարանի և քաղաքացիական կոմիտեի բովից: Մեր կազմակերպության 30 տոկոսը կազմում են թեկնածուները: Սրանց անհրաժեշտ է յերկարատև և սիստեմատիկ թեորիական քաղաքական կրթ-թուլթյուն տալ: Վերջապես մեր առաջ յնդիր է դրվում դաս-տիարակել միլիոնավոր կոլանտեսականների պրոլետարական սոցիալիզմի վոգով, մեր պրոպագանդի և քաղաքական աղ-ղեցության եակ առնել բոլոր աշխատավորներին: Այստեղ հիշենք ընկ. Ստալինի խոսքերը՝

«Կարիք կա դեռևս շատ աշխատակի կատարելու, վոր-պեսզի վերալիսեն կոլտնտեսական գյուղացուն, շտկենք նրա ինդիվիդուալիստական հագեբանությունը և նրանից պատրաստենք սոցիալիստական հասարակու-թյան իսկական աշխատավոր»*):

*) Ի. Ստալին, «Վեն. հարցերը», էջ 11:

կոլտեստեսականի վերադաստիարակութեան խնդրին պետք է հատուկ ուշադրութեամբ նվիրեն գյուղական կուսակազմակերպութեանը:

Յերիտասարդ կուսակցականներին, մասնավորապես գյուղական կուսակցականներին մարքս-լենինյան դաստիարակութեան գործը պետք է զբաղվեն մեր ուշադրութեան ու ջանքերի առավելագույնը: Հենց այս կուսակցական յերիտասարդներին, —ասում է ընկ. Պոստիլնիկը,—մեզ անհրաժեշտ է դաստիարակել բանվոր դասակարգի և աշխատավոր մասսայի ղեկավարներ:

Սխալ կլինեք կարծել, թե այդ դաստիարակությունը միայն տրվում է կուսուսուցման ցանցում: Այդ դաստիարակությունը ընթանում է կուսակցության կազմակերպական-քաղաքական աշխատանքների ուղղութեամբ, մասսայական ազիտացիայի ուղղութեամբ, աշխատանքի սոցմրցակցութեան և հարվածայնութեան, բայլչեիկյան քննադատութեան ծավալման ուղղութեամբ: Յեզ վերջապես մեր սոցիալիստ. շինարարության պրակտիկան լավագույն դպրոցն է կոմունիստական դաստիարակության համար:

Այն հանդամանքը, վոր կուսակցությունը մինչև վերջը պայքար է մղում կոլխոզինարարության բնագավառում և առևտրի գծով կատարված սխալները շտկելու համար, դա մեծադույն քաղաքական դաստիարակչական լծակներին մեկն, վորը նպաստում է կուսակցության ավելի արագ առաջխաղացմանը: Վերին աստիճանի հետաքրքիր է Լենինի կարծիքն այդ առթիվ: Նրա մտա մենք կարդում ենք.

«Քաղաքական կուսակցության վերաբերմունքը դեպի իր սխալները՝ կուսակցության լրջութեան և իրոք՝ իր դասակարգի և աշխատավորական մասսաների առաջ իր պարտականությունների կատարման ամենազրկավոր և ամենաճիշտ կրիտերիաներից մեկն է: Բացե՛լ իրաց ընդունել սխալը, պարզել նրա պատճառները՝ վերաճել այն առաջացնող միջավայրը, ուշադրությունը ցուցնել սխալն ուղղելու միջոցները—ահա դա յե

դասակարգի և ապա մասսայի դաստիարակությունը և ուսուցումը»*):

Ահա թե ինչու ընկ. Պոստիլնիկը հիշատակում է, վոր մարքս-լենինյան դաստիարակությունն ավելի լայն հասկացողություն է, քան կուսակցական ուսուցումը: Մեր նպատակը պետք է լինի՝ լիովին և հարատև, առանց կամպանիոն շարժանի, ոգտադործել բոլոր հնարավոր միջոցները՝ յուրաքանչյուր բանվորի, կոլտեստեսականի, աշխատավորի կուսակցությունների դաստիարակության, մարքս-լենինյան ուսուցման հնոցից անցկացնելու համար: Առանց այս բանի մեր հետագա առաջխաղացման մասին խոսելն անհիմն է և անիմաստ:


Յեա այժմ կջանամ համառոտակի և կոնկրետ կերպով ասել, թե մեզ մոտ ինչ է արված այդ ուղղութեամբ 1931-32 ուստարում:

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Իր պատմական վորոճման մեջ ՀամԿ (բ) Կ Կենտկոմը (1931 թ. հոկտ. 31) տվեց նաև Անդրկովկասյան կուսակազմակերպությունների իդեոլոգիական Ֆրոնտի և մարքս-լենինյան դաստիարակության բայլչեիկյան ղեհհատակները: Մեզ մոտ գոյություն ունեցող իրերի վիճակը դադարակական-քաղաքական աշխատանքների բնագավառում լիակատար և պարզորոշ կերպով ղեհհատված է ՀամԿ (բ) Կ Կենտկոմի վերոհիշյալ վորոճման մեջ: Անդրադառնալով կուսակազմակերպությունների քաղաքական-կազմակերպական ամրացման խնդրին՝ ՀամԿ (բ) Կ Կենտկոմն արձանագրում է.

«Արձանագրելով գաղափարական-քաղաքական աշխատանքի ընդհանուր քաղաքական Անդրկովկասի կազմակերպություններում (դաստիարակչական ցանցն ընդգրկել է կոմունիստներին կազմի ընդամենը մեկ-յերրորդ մասը, կան իդեոլոգիական անկախությունների ղեհքեր, անդամ հակակուսակցական ուսուցիչի վրա սա-

*) Ленин. Собр., соч. т. XXV, стр. 201.



հելու ղեպքեր առանձին ստորին բլիթներում) : Առաջարկել Անդրյերկոմին և ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին՝ իրենց ուշադրության կենտրոնակետ դարձնել ամբողջ կազմակերպության գաղափարական-ֆաղափական մակարդակի բարձրացումը բայլշուիկյան ֆինանստության ծավալման հիման վրա, կուսակցության անդամների մարքս-լենինյան դաստիարակության աշխատանքը և անհաշտ պայքար մղել իդեոլոգիական փրանտում կուսակցության գծից յեղած ամեն տեսակ շեղումների դեմ» :

Պարզորոշ և հստակ կերպով ասված է իդեոլոգիական ֆրոնտի, մարքս-լենինյան դաստիարակության դրության թուլության մասին մեզ մոտ : Համկոմկուսի կենտկոմի տույն վորոշումը իդեոլոգիական ֆրոնտի, հատկապես կուլտ-պրոպ աշխատողների վրա դնում է չափազանց կարեւոր քաղաքական պարտավորություն : Ըստ ելույթյան, այն պահանջում է մեղնից՝ վերից վար վերակառուցել մեր աշխատանքները ինդուստրացման, մասսաների կուլտուր-ֆաղափական ակտիվության ամրան տեմպերի համեմատ : Իդեոլոգիական անկալունության, հակակուսակցական ուղտերի վրա սահելու ղեպքեր տեղ են գտել նաև Հայաստանում : Բավական է այստեղ մատնանշել Դարաբազյանի անցյալ ամառվա ղեպքը, վորպեսզի մեզ համար ավերորդ անդամ պարզ ու հասկանալի դառնա Համկ (բ) Կ կենտկոմի հոկտ. 31-ի պատմական վորոշման վճռական խմատը :

Համկ (բ) Կ կենտկոմի այդ վորոշումը, ինչպես ճիշտ նշեց Անդրյերկոմը այդ առթիվ ընդունած իր վորոշման մեջ, հանդիսանալու յե սոցիալիզմի վերջնական կառուցման համար մղվող մեր պայքարի մարտական և բաղձակողմանի ծրագիրը :

Կասկածից վեր է, վոր այդ վորոշումից հետո Հայաստանի կուսակցական կազմակերպություններն անհամեմատ անել ու ամրացել են գաղափարական-ֆաղափական տեսակետից : Սակայն դեռ այսօր էլ,—ինչպես չեչտեց կենտկոմի և

ԿվՀ-ի վերջին միացյալ պլենումը,—գյուղական կուսակազմակերպությունների կատարած աշխատանքներն այդ ուղղությամբ չեն կարող մեզ բավարարել : Դեռ մինչև որս էլ մենք ականատես ենք առանձին կուսակցականների և առանձին բլիթների (Ծաղկունք) սահելուն հակակուսակցական կուլտուրային ուղտերի վրա : Դեռ մի շարք շրջաններում շարունակում են տեղ գտնել «ձախ» կարգի սխալները կոլտնտիշնարարության, մթերումների և այլն գծերով :

Իսկ ի՞նչ ենք կատարել և ի՞նչ պիտի անենք մենք կուսակցական կազմակերպությունների դադավարական-քաղաքական մակարդակի բարձրացման ուղղությամբ : Վո՞րպիսին են այն իրական արդյունքները, վոր մենք ունենք այսօր 1931-32 թ. աշնան-ձմեռային կուսուսուցման ընադավառում :

7. 1931-32 թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆԱԽԱՊԱՏ-ԲԱՍՏՈՒՄՆ ՈՒ ԸՆԹԱՑՔԸ

Անցյալ տարի ամբողջ Հայաստանում մենք դրեթե ժամանակին նախաձեռնեցինք կուսուսուցման միավորներն կազմակերպման նախապատրաստական կազմակերպական աշխատանքները : Հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 1-ը ամենուրեք հիմնականում սկսվեցին գործնական ուսումնական աշխատանքները : Սակայն բամբակացան և վոչ մի շրջան վոչ միայն ժամանակին չսկսեց կուսուսուցման գործնական պարամունքները, այլ նրանք ցանցի կազմակերպման ընդհուպ ձեռնարկեցին դեկտեմբերի սկզբներին : Ամենազխտավոր բայց, վորը տեղ գտավ 1931-32 թ. աշնան մեր աշխատանքներում, այդ այն է, վոր ամբողջների կոմպլեկտավորումը կատարվեց հիմնականում անբավարար դիֆերենցիալ մտեցմամբ : Բայց նախորդ տարիների հետ համեմատած, մենք 1931 թ. աշնանը ավելի նախապատրաստված և ավելի կազմակերպված դիմավորեցինք, յեթև անտես առնենք դասադրքերի ու ծրագրերի ուշացումը :

Յես կարծում եմ, վոր այս տարի մենք իրավունք ունենք խոսելու կուսուսուցման ասպարեզում ունեցած մեր

նվաճումների մասին: Սակայն այդ նվաճումներն ու հաջողությունները հեռու չեն բավարար լինելուց. մանավանդ վոր նրանք չեն ամրապնդված ամառվա կուսուսուցման ներկա դրությամբ: Յերբ խոսում ենք մասնակի նվաճումների մասին կուսուսուցման ասպարեղում, ապա մենք նկատի ունենք այն քանակային աճը, վորին ահանատես ենք այս տարի: Կուսուսուցման ցանցի այն պլանը, վորպիսին մենք տվել ե-յինք տեղերին, վորը հաստատվեց ՀամԿ (բ) Կ Կենտկոմի կողմից, կատարված է: Կուսուսուցման ցանցը վերջին տարի-ներում հետևյալ դինամիկան ունի:

1929—30 թ. ամբողջ Հայաստանում կուսակցական ուսուցման ցանցը ներկայացնում էր 336 միավոր 10,160 ուն-կիրդիրներով, սրանցից կուսանդամներ է թեկնածուներ 3861 հոգի (31,8 տոկոս):

1930—31 թ. դործում էլին 424 միավորներ 12,313 ուն-կիրդիրներով, վորոնցից կուսակցության անդամներ ու թեկ-նածուներ 5903 հոգի կամ 36,5 տոկոս: Իսկ այս տարի միայն քսանևչորս շրջաններում կուսակցական ուսուցման ցանցը հետևյալ պատկերն ունի:

1931—32 թ. թ. դործել են ընդամենը 912 միավոր 25,925 ունկիրդիրներով: Սրանցից կուսանդամներ 8500: Թեկնածուներ 4,509, ընդամենը 13,009: Այսպիսով 1930—31 թ.վի հետ համեմատած, այս տարի միավորներն աճել են 100 տոկոսով, գրեթե այդքանից ավելի աճել է ունկիրդիրների թիվը. մոտ 110 տոկոսով աճել է կուսակցական ունկիրդիրնե-րի քանակը: Այսպիսով, այս տարի մենք կուսուսուցման մասսայական ցանցում ընդգրկել ենք բոլոր կուսանդամները՝ 52 տոկոսից ավելին, իսկ թեկնածուների շուրջ 66 տոկոսը: Բավականին աճել է աշխատավոր կանանց թիվը, վորը հա-վասար է 2782 հոգու: Սոցիալական դրությամբ այս տարի մեր ցանցն ունի այսպիսի պատկեր. սովորողներից բանվոր-ներ 8.768 հոգի, 1930—31 թ. 3972—ի դիմաց: Գյուղացիներ՝ 12,938, ծառայողներ՝ 3294: Այսպիսով, կուսակցության մեջ յեղած բավոր ընկերների 60 տոկոսից ավելին, իսկ գյու-

ղացի կուսակցականների գրեթե 80 տոկոսը սովորում է կուս-ուսումնական ցանցում:

Դուր գրեթե, վոր ՀամԿ (բ) Կ Կենտկոմն իր վորոյմամբ մեզ պարտավորեցրել էր կուսթեկնածուներին գլխովին ընդգրկել կուսուսուցման ցանցում: Այժմ տեսնենք, թե ըստ շրջանների ինչպես է կատարված կուսակցության այդ կարևոր գիրեկտիվը: Յերևանի 1007 կուսթեկնածու-ներից ցանցում ընդգրկված են 435 հոգի: Այս յերևույթը նորմալ է, քանի վոր թեկնածուների մեծ մասը ուսանողական բջիջներում են, վորոնք սովորում են զանազան կրթական միավորներում:

Լենինականի 1246 թեկնածուից 1004 հոգի յեն սովորում կուսցանցում: Այստեղ ևս համարյա նույն դրությունն է, ինչ Յերևանում:

Ղափանում	328	թեկնածուից սովորում են	145
Ղարաքիլիսա	400	»	231
Արթիկ	369	»	150
Վաղպատ	218	»	200
Իջևան	131	»	80
Ղուրղուղուլի	177	»	142
Գորիս	83	»	80
Աբարան	124	»	111
Սրսիան	119	»	68
Դիլիջան	109	»	170
Մարտունի	127	»	80
Բայազետ	127	»	81
Շամշադին	104	»	84
Աշտարակ	104	»	181
Վեդի	188	»	172
Աղբաբա	167	»	81
Բասարգեշար	114	»	85
Թալին	97	»	80
Ստեփանավ.	180	»	133
Քեշիշքեդ	102	»	83

ինչպես յերևում է այս տախտակից, մի շարք շրջաններ լուրջ մտահոգված չեն թեկնածուների կուսուսուցման մասին: Այդ տեսակետից բացառիկ տեղ է գրավում Արթիկը, ուր 369 թեկնածուներից միայն 150 հոգի չեն սովորում: Մեր բերած փաստերն ապացուցում են, վոր բացի միջանի շրջաններից (Գորիս, Թալին, Դիլիջան, Վաղպատ և այլն) մնացածները կուսթեկնածուներին լիովին չեն ընդգրկել կուսկրթության սխտեմում, ապա ուրեմն չեն իրագործել Համ. Կ (բ) Կ Կենտկոմի հոկտ. 31-ի վորոշումն այդ առթիվ:

Ժամանակի պատճառով յես հնարավորություն չունեմ կանգ առնելու խնդրի վերոհիշյալ կողմի վրա: Միայն այստեղ պետք է նշել մի կարևոր հանգամանք, վոր 1931-32 թ. գործող վերև մասնանշված բոլոր միավորները միջին հաշվով ունեցել են 15-ից 20 պարամունք. նրանց վորոշ մասը մինչև վերջը չեն շարունակել իրենց աշխատանքները: Այստեղ պետք է նկատի առնել նաև այն իրողությունը, վոր վորոշ դպրոցներ կան, վորոնք թղթի վրա յեն, բայց չգիտեմ ինչու, տեղական մեր աշխատողները թվական տվյալներ լրացնում են և ուղարկում: Ըստ յերևույթին այս ասպարեզում ևս կան աչքակապության դեպքեր: Այլ կերպ չի կարելի բացատրել, յերբ Վեդիի կուլտ-պրոպ ընկ. Բաղդասարյանը մեզ գրում է, թե «կուսուսուցման ցանցը տապալման առաջ է կանգնած», իսկ ինքը ներկայացնում է մեզ, ինչպես տեսնում եք, վոր այնքան էլ վատ բան ասող թվեր: Անհրաժեշտ է վերջ տալ այս խայտառակությանը և կուսակցության Կենտկոմին ասել, վոր բավական դպրոցներ մինչև վերջը չեն գործել, վոր սովորողների մասնակի մաղում է յեղել, վոր մի շարք շրջաններում դարձանացանը «չոգիացրեց» զգալի թվով կուսուսուցման միավորներ: Այժմ թույլ տվեք կանգ առնել առանձին շրջանների վրա:

Ինչպես պետք էր, Յերևանի կուսակցական կազմակերպությունը կուսուսուցման ասպարեզում գնում է առաջից: Եվ մենից առաջ կա իսկական հաշվառք և կատարողականի

ստուգում: Յերևանի կոմիտեն ահապահանք է ծափարել թեկնածուների մեջ: Համեմատական չափով ապահովվել է պրոպոզիցիայի հրահանգումը: Վորակն այստեղ վատ չէ: Կա կազմակերպական պարզություն ցանցում և կապ աշխատանքության հետ: Այս ամենի հետ միասին կան և խոշոր թերություններ, վորոնց մասին այստեղ կարտահայտվեն: Ընթացիկ տարում ինչնականը ևս ահապահանք է տարել կուսուսուցման ասպարեզում: Անցյալ տարիների համեմատությամբ այս տարի այնտեղ յեղել է շատ թե քիչ նորմալ գործող կուսկրթության մի սխտեմ: Գրությունը միանդամայն անրավարար է յեղել յերկաթուղում, ուր մենք ստիպված յեղանք ուղարկել մեկ պրոպոզիցիայի մեկ ամիս ժամանակով, վորին հաջողվեց վերականգնել ցանցի աշխատանքները:

Այս տարի միանգամայն վատ հիմքերի վրա յե գրված յեղել կուսուսուցումը բամբակացան շրջաններում: Քիչ թե շատ աշխատանք է տարվել Դուրդուղուղում: Վերջին ուսումնասիրությունը ցույց տվեց, վոր Ղամարլուն հիմնովին տապալել է ամենայնից ցանցը, շնորհիվ շրջկոմի անուշադիր վերաբերմունքի և կուլտ-պրոպ բաժնարի անհարակուսյալի: Խնդիրն այնտեղ հասավ, վոր Կենտկոմն ստիպված յեղավ Վաղպատի մասին հանել այնպիսի կտրուկ վորոշում, վորը ձեզ հայտնի յե: Այժմ Վաղպատի կուսցանցն աշխատում է բավարար, իսկ շրջկոմն էլ դարձնում է հարկ յեղած ուշադրությունը:

Վերցնենք Աշտարակի շրջանը: Այստեղ հիրավի տանելի վիճակում է կուսուսուցումը:

«Սահմանված են կուսքաղցանցի միասնական որեր դեկադում յերկու անգամ: Շենքերով, լույսով, վառելիքով դպրոցներն ապահովված են յեղել, միայն գրականությունը ցանցն այնքան էլ ապահովված չի յեղել: Գյուղը շիններում ստեղծվել են 21 կուսգրադարաններ: Գյուղը շիններին ուղարկված է 540 որեր-

նակ ընկ. Ստալինի վերջին նամակից: Կազմակերպված է շրջանային կուսգեորգարան 2000 անուն գրքով: Վորոշ տեղերում (Ոչական, Կոչ) ունեկողերնեքը հաճախել են անկանոն: Ե. Վ. Հ.-ն միջոցներ է ձեռք առել այն բջիջների և խմբակավարների դեմ, վորոնք լավ չեն դրել ուսուցման գործը: Ագիտ-բաժնին կից կազմակերպվել է մեթոդ-բյուրո: Կազմակերպված է և վորոշ աշխատանք է տարել կուսկաբինետը: Մարքս-լենինյան դաստիարակութան հարցերի շուրջը հրավիրվել են շրջանային յերեք ագիտ-պրոպ խորհրդակցութուններ: Յերեք անգամ շրջկոմի բյուրոն լսել է գեկուցում կուսուսուցման մասին և ձեռք է առել միջոցներ ցանցի աշխատանքներն ավելի բարելավելու համար: Կազմակերպված և վերջերս կանոնավոր աշխատում է կուսուսուցիչը: Կուսկազմակերպութան 88 տոկոսը, իսկ թեկնածուները 98 տոկոսը ներգրավված է ցանցում: Երջկոմը ակտիվ համար կազմակերպել է միբանի լուրջ տեսական գեկուցումներ կենտրոնի ուժերով: Յուրաքանչյուր խմբակ միջին հաշվով ունեցել է 23 պարապմունք: Ոչականում ընկ. Ստալինի 6 ցուցումները մշակելիս ընտրել են միբանի բրիգադներ, վորոնք խմբակների հանձնարարութամբ կիրառել են կոլխոզում 6 ցուցումները: Յեղել են խմբակներ, վորոնք թեորիան չեն կապել գործնականի հետ (Ղզլթամուր):»:

Չնայած մի շարք բացերին, այսուամենայնիվ Աշտարակում դեռութունը միթարական է և յերևում է, վոր այստեղի մեր ընկերները լուրջ կերպով դադարում են կուսակցականների քաղաքական ուսուցման հարցերով:

Վերցնենք Ն. Բայազետը: Նախորդը պիտի ասեմ, վոր այստեղ շրջկոմի ագիտ-մաս բաժնին ունի լավ հաշվառք և գիտի իր գործն այդ ուղղութամբ:

«Կուսակցականներն, ինչպես և թեկնածուները, գլխովին ընդգրկված են կուսլուսավորութան ցան-

ցում: Բացակայութունները կազմում են 12 տոկոսը: Կազմակերպել են պրոպագանդիստները 2-ամսյա դասընթացներ 20 հոգու համար: Դասընթացները վերջացրել են հաջողութամբ: Կուսուսուցման ցանցում կիրառվել են սոցմրցում ու հարվածայնութուն: Պարապմունքները բոլոր դպրոցներում ընթացել են նորմալ, բացառութամբ Քյարիմքյանդի, Բաջքյանդի և Այրիվանքի խմբակների, վորտեղի պրոպագանդիստները մեկ ամսով տապալել են կուսուսուցումը, վորի համար Այրիվանքի բջիջի քարտուղարը հեռացվել է իր պոստից, իսկ մյուս յերկու դյուզերի պրոպագանդիստները հեռացված են կուսակցութունից: Երջկենտրոնի կուս-խորհրդային դպրոցը կատարել է իր պլանը: Կոմպլեկտավորման ժամանակ կատարվել են սխալներ: Պրոպագանդիստների համար կազմակերպվել են սեմինարներ և 4 մեթոդ-խորհրդակցութուն: Հրավիրվել են ունեկողերի շրջանային կոնֆերենցիաներ: Ագիտ-բաժնին կից կազմակերպվել են 4 պրոպ-հրահանգական խմբակներ: Երջկոմն ունեցել է չորս պրոպագանդիստ հրահանգիչ, այժմ մեկն է մնացել: Յերեք կուսդպրոց, ստացել են 100 ու. արժողութամբ դրադարաններ նվեր՝ սոցմրցման կարգով: Միբանի կուս. և ԼԿՅՄ ուսումնական միավորներ թերթի միջոցով բարձրացվել են կարմիր տախտակի: Բասարգեչարի և Մարտունու հետ կապել են սոցմրցման պամանադիր, վորը լիովին կատարել են, ուղարկել են այդտեղ բրիգադ մրցման արդյունքները ստուգելու և այդ մասին գրել են թերթում»:

Իսկապես, ընկերներ, այստեղ բավական աշխատանք է կատարված, չնայած յեղած բացերին ու թերութուններին: Միանգամայն իրավացի յե շրջկոմի բյուրոն, յերբ կուսուսուցման աշխատանքները համարել է բավարար:

Նշանակալի աշխատանք է տարվել Գորիսի, Աբարանի, Կոտայքի և միբանի ուրիշ շրջաններում: Այս տարի միան-

գամայն հաջող և զբվել գործը Ալլահվերդում. կարելի չե հաստատ պնդել, վոր Ալլահվերդին կուսուսուցման գործում — յեթե մի կողմ թողնենք Յերեանն ու Լենինականը, — բըւնում և առաջին տեղը :

«1931-32 ուս. տարում Ալլահվերդում կազմակերպված են 59 միավորներ, վորոնցից 8 կուսխորհրդաբաշին, 38 կուսնախնական, 11 թեկնածուական, 2 առարկայական դպրոցներ 1561 ունկնդիրներով : Կազմակերպվել են 7 միավոր 182 ունկնդիրներով հուլյաների, թուրքերի, պարսիկների և ուսնների համար : Յանցում ընդգրկվել են կուսանդամների 70,4 տոկոսը, թեկնածուների 92,1 տոկոսը : Բավարար և աշխատել կոմսոմոլի կրթության ցանցը» :

Յեթե Արթիկի, Վեդու, Ղափանի և Ղամարլվի մեր ընկերները հետևեյին Ալլահվերդու որինակին, ապա մենք չեյինք ունենա այն անբավարար ցուցանիշները վերոհիշյալ տեղերում, վորպիսին ունենք այսօր :

Այժմ դիտենք մեր բացասական կողմերը : Վերցնենք Ղամարլուն, վորն ուներ բոլոր նյութական և մարդկային պայմանները կուսակցական ուսուցումը հաջող կազմակերպելու համար : Բայց...

«Շրջկոմի կուլտ-պրոպլ. ձեռքի տակ բացարձակապես վոչ մի տվյալ չկա աշնան-ձմեռային աշխատանքների մասին : Կուլտ-պրոպլը չգիտե, թե շրջանում կուսուսուցման քանի միավորներ են կազմակերպված, ինչքան պարապմունք են ունեցել և քանի կուսակցականներ են սովորում : Շրջկոմի գեկավարությունը ցանցի վրա իսպառ բացակայել և : Ամբողջ տարում խրմբակավարների համար չի յեղել և վոչ մի սեմինար կամ խորհրդակցություն : Ընդամենը աշխատել են 10-15 միավոր և այն ել 1 և կես ամիս» :

Յեվ նման խայտառակ դրությունն ունենալով հանդերձ, Կուլտ-պրոպլ բաժնավարը համաձայնվում և վարել նաև առ-

բաժնի աշխատանքները. կասկածում են այն գնահատականի հշուտթյան վրա, վորը տվել են Կենտկոմի և Անդրյերկոմի բրիգադները՝ ցանցի աշխատանքները Ղամարլվում համարելով միանգամայն անբավարար : Նման ինքնագոհություն կա նաև մի շարք ուրիշ շրջաններում : Այսպես, որինակ, Ստեփանավանի շրջկոմն արձանագրում և, վոր յեղած ցանցի 52 տոկոսն և նորմալ գործել, իսկ հետո ավելացնում և. «Բազուսուցման ընթացիկ տարվա աշնան — ձմեռային սեզոնում գործող ցանցի աշխատանքներն ընդհանուր առմամբ հավարել բավարար» : Յեվ այս այն ժամանակ, յերբ վոչ մի քեկնածուական խմբակ չի կազմակերպվել, սխալ կոմպլեկտավորում է յեղել, բացակայել և կատարածի ստուգումը և այլն : Ստեփանավանի շրջկոմի նմանորինակ մտտեցումը խնդրին աղբյուրցում և, վոր դեռևս կուսակազմակերպությունները հարկ յեղած չափով չեն վերակառուցվել : Այդ ցույց և տալիս, վոր դեռ մի շարք միավորներ «գործում են ընդհանուր առմամբ» :

Այդպիսի շարունի, արաֆարետային վոճի, «ընդհանուր առմամբ» գործելու բացառիկ որինակ և տալիս Գիլիջանի կուսակցական շրջկոմի ազիտ-բաժինը :

Ահա ձեզ փաստ : Յես կկարդամ ձեզ նրանց խմբակավարների խորհրդակցության բանաձևերը, իսկ մնացածը դուք յեզրակացրեք : Բավական և, ընկերներ : Այժմ այս կերպ չի կարելի աշխատել : Անհրաժեշտ և, վոր մեր ազիտ-մաս և կուլտ-պրոպլ բաժնավարները սովորեն իրենց ֆունկցիաները ճշտորեն ոգտագործել և ամենից առաջ զբաղվեն կուսակցական աշխատանքներով :

Իվերջո պետք և ստել, վոր այս տարի ուսման վորակի սուպարեզում մենք ունենք շոչափելի հաջողություններ, սակայն դրուքայունը հեռու յե բավարար լինելուց :

8. ՀԱՄԱՌ ՅԵՎ ՏՈԿՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ՎԵՐԱՑՆԵՆՔ
ԿՈՒՍ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՖՐՈՆՏԻ ԲԱՅԵՐԸ

Վորո՞նք են կուսակցական ուսուցման ցանցի հիմնական բացերն ու թերութիւնները, վորոնց վերացման համար մենք պետք է ձեռնարկենք համապատասխան միջոցներ:

Ամենից առաջ, չըջկոմները և կուսակցական բջիջները մարքս-լենինյան դաստիարակութեան խնդիրներով քիչ են զբաղվում և չեն ղեկավարում այդ ֆրոնտը անհրաժեշտ չափով: Առանց այս յերևույթի վերացման մենք ռեալ արդեւոյններ չենք ստանա: Այն կազմակերպութիւններում, վորտեղ կուսակցական կոմիտեները (Յերեան, Լենինական, Ալլահվերդի, Գորիս, Բայազետ, Աշտարակ, Իջևան և այլն) հատուկ ուշադրութիւն են նվիրում մարքս-լենինյան դաստիարակութեան հարցերին, մենք ունենք զգալի բեկում դեպի լավը:

Յերկրորդ թերութիւնը, վորը հակայական չափով կասեցնում է կուսակցական ուսուցման գործի ծավալումն ու զարգացումը, դա կուլտ-պրոպ և ազխտ-մաս բաժնիւների աննշան վերակառուցումն է և սպերատիվ ղեկավարութեան միանգամայն անբավարար դրութիւնը: Սոսքս վերաբերում է վոչ միայն շրջանային կուլտ-պրոպներին, այլ նաև մեզ կենտրոնի կուլտ-պրոպ բաժնին: Ճիշտ է, այս տարի մեր պրոպամբակը կոնկրետ ղեկավարութեան և անմիջական սթանդարտութեան գծով զգալի աշխատանք է կատարել տեղերում: Հայտնի յե, վոր մի շարք շրջաններում ինչպես ձմեռային, այնպես և ամառային ցանցի կազմակերպման ու գործարկելու գծով կենտրոնի պրոպամբակները շատ բան են կատարել: Արդեն յերրորդ ամիսն է, ինչ շրջաններում մեր կողմից գործուղված ընկերները (21 հոգի) աշխատում են ամառային կուսուսուցման գծով:

Ահա ձեզ մի կոնկրետ որինակ, թե ինչպես ենք կազմակերպել կոնկրետ ղեկավարութիւնը և ոգնութիւնը շրջանին:

Ախտայի շրջան ուղարկված մեր պրոպամբակը հայտնում է մեզ.

«Յերենովկայի յենթաշրջանի դյուղերում կուսակցական քաղուսուցման աշխատանքները հաջող կերպով են ընթանում: Բացի կոմունիստներից և կոմյերիտականներից, մասնակցում են նաև անկուս կոլխոզնիկ ակտիվը և վոչ-կոլխոզնիկ յերիասարդութիւնը. սլարամունքները տարվում են հնդրըյակում շորս անգամ. սլարամունքները ժամերն այնպես են դասավորված, վոր չեն խանդարում գյուղական մյուս կազմակերպութիւնների ժողովներին և աշխատանքներին:

Բացի նախնական կուսպրոպում ընդգրկված կոմունիստներից անգրագետներին ամբացված են վորոշ ընկերներ նրանց անգրագիտութիւնը վերացնելու նպատակով: Նույնը է կոմյերիտականի նկատմամբ, իսկ կոլխոզնիկ և վոչ-կոլխոզնիկները ընդգրկված են դյուղում բացված յերկու լիկկայանների մեջ: Յերեք դյուղերում ունեցել ենք 32 պարամունք, ժամերի թիվը հասցնելով 76-ի. դպրոներում լայն կերպով ծավալել ենք սոցիալիստական ձեռն ու մեթոդները, սոցմըրցումն ու հարվածայնութիւնը ունեղիւնները և առանձին դյուղերի ու դպրոցների միջև: Ունեղիւններ յուրացումը բավարար է. ակտիվներով յերույթներ են ունենում անցած թեմաների շուրջը. նյութը մարսվում է մտքերի լայն փոխանակութիւններից և սլարգրանումներից հետո: Անցած նյութերի շուրջը դպրոցի մասնակցողներին արվում է ռեֆերատ, փոքրիկ զեկուցումներ, բոլոր մասնակցողների ակտիվութիւնը հնարգես բերելու համար: Դպրոցում անցած նյութերը շարկապում են կուսակցութեան ընթացիկ քաղաքականութեան, կուսակցութեան բարձրագոյն որդանների վորոշումների կենսագործման հետ (ընկ. Ստալինի նամակները, կուս. 17-րդ կոնֆերենցիայի վորոշումները և այլն): Վերջին որերս շնորհիվ տեղական կուս-

և կոմյերիտական կազմակերպությունների կողմից ձեռնարկած խիստ կազմակերպական մի շարք միջոցների մատուցումների սովոր առայժմ հասցրած է 0-ի :

Ծաղկունք գյուղում կուսանդամներ մասնակցում են 6 հոգի, թեկնածուներ 2 (100 տոկոսով), կոմյերիտականներ 25 հոգի, կազմակերպության 75 տոկոսը, անկուս յերիտասարդներ և միջահասակներ 17 հոգի. այս գյուղում ընդամենը 50 հոգի, սրանցից բանվորներ 3, բատրակներ 11, վոչ-կոլխոզնիկներ 14. կոլխոզնիկներ 22 հոգի : Ծահրիզ գյուղում՝ կուսանդամ 5 հոգի, թեկնածուներ 3 հոգի, կոմյերիտականներ 12 հոգի, անկուս 8, սրանցից բանվոր 1, բատրակ 4 հոգի վոչ-կոլխոզնիկներ (միջակ, չբավոր) 4, կոլխոզնիկներ 17 հոգի, ընդամենը 26 : Դրամաշեն գյուղում... մասնակցում են 40 հոգի, կուսանդամ 20, թեկնածուներ 5, կոմյերիտական 8, հարվածային կոլխոզնիկներ 7 հոգի, յերեք գյուղերում քաղաքացուցում ընդգրկված են 106 հոգի, կոմունիստներ 41 հոգի, կոմյերիտականներ 43» :

Այնուհետև ընկերները գրում են, վոր հաճախ պարապմունքներ ունենում են դաշտում և այլն : Միանգամայն լավ են աշխատում մեր պրոպագանդները Դարալագյաղում : Հունիսի 10-ից մենք դործուղեցինք՝ Գեչիչքենդ, Փաշալու, Վաղպատ, Թալին, Մարտունի, Աբարան, Սիսիան շրջանները պրոպագանդներ 3-ական մարդուց : Այդ ընկերները յերևում է վոր իրենց կարգարացնեն : Մենք պետք է աշխատենք այսուհետև ևս պրոպագանդների, գիտական դասախոսությունների, լեկտորական խմբակների միջոցով ոգնել գյուղական և շրջանային կուսկազմակերպություններին :

Մյուս կարևոր բացը մեր գործունեություն բնագավառում՝ այդ կատարածի ստուգումն է և հաշվառքը : Բազմաթիվ շըրջաններում շրջկոմները չեն ստուգում այն, ինչ կատարված է այդ գծով : Դեռ սովերին. մի շարք վայրերում դպրոցները ա-

վարտել են իրենց պարապմունքները առանց ստուգման և ախարտական վկայականի : Ծատ թե քիչ տանելի և իսկական հաշվառք կուսուսուցման ասպարեղում ունեն միայն Յերեվանը, Բայազետը և միքանի ուրիշ կազմակերպություններ : Մնացածներն այդ գործի վրա նայում են մատների արանքով :

«Գլխավորն այն է, վոր ծանրության կենտրոնը դեկրետներ և հրամաններ գրելուց (մենք այստեղ իդիոտություն աստիճանի հիմարություն ենք անում), փոխադրենք մարդկանց ընտրության և կատարման ստուգման մեջ : Այս է էյականը»*) :

Փոխանակ ստանդարտ և բովանդակազուրկ բանաձևեր գրելու, — լավ և կոնկրետ բանաձևեր մենք պետք է գրենք անշուշտ — մեզ անհրաժեշտ է կատարածը ստուգել, կազմակերպել գործի և կենդանի մարդկանց հաշվառք և լավ ընտրություն : Իսկ այս կարևորն ու էյականը մենք շատ վատ ենք կատարում :

Դուք գիտեք, վոր ընկ. Ստալինն իր նշանավոր 6 ցուցումներում պահանջում էր, վորպեսզի արտադրություն մեջ յեղած դիմազրկությունը անհապաղ վերացվեր : Այդ ուղղությամբ տնտեսական բնագավառում ունենք խոշոր հաջողություններ : Բայց յեկեք քննենք մեր կուսուսուցման ցանցը այս անկյունակետից : Արգյոք կատարված է դեկավարի ցուցումը : Վոչ, դժբախտաբար : Մինչդեռ ուսուցման սիստեմում դիմազրկությունը վաղուց սեղմում է մեր կրճենկը : Միավորներ կան, վորտեղ վոչ սովորողներն են իրենց ուսման համար պատասխանատու և վոչ էլ դասատուները : Բազմաթիվ դեպքեր են լինում, յերբ դպրոցավաթը բացակայում է միանգամայն անհարգելի պատճառներով, իսկ շրջկոմն ու բժիշկը «մոռանում են» միջոցներ ձեռնարկել : Դասատուները չեն ճանաչում իրենց սովորողներին՝ հարկ յեղածին պես, Ոպորտունիստական ինքնահոսը այս բնագավառում ևս դան-

*) Լենին, «Պետապարատի լավացման մասին», էջ 62—63 :

դադեցնում է մեր վերելքը: Անհրաժեշտ է այն հաղթահարել, սահմանել հսկողութեամբ և մաքսիմալ պատասխանատվութեամբ կուսուսումնական սիստեմում՝ սկսած չրջկոմի բաժիններից, վերջացրած ամեն մի անհատ ունկնդրով և սովորողով:

Բարձրացնել պատասխանատվութեամբ կուսակցական ուսման ասպարեզում—այդ բայը և ինչն էր կուսակցութեան գործնական և անհետաձգելի խնդիրն է: Այդ անհրաժեշտ նախապայմաններից մեկն է մարքս-լենինյան գաստիարակութեան գործի իսկական լավացման համար:

Ձի կարելի այստեղ անուշադրութեան մատնել մի կարեւոր թերութիւն. այդ մեր ծրագրերի հրատարակման գործի անկանոնութիւնն է և այդ ծրագրերի մասնակի շարունակումը: Կուսուսուցման ցանցի ծրագրերը չեն կազմված սովորողներին գիֆերենցիալ մոտեցում ունենալու պահանջից: Այդ բացը պետք է աշխատենք վերացնել այս տարի: Ի դեպ, տեղին է ձեր ուշադրութեամբ հրավիրել ահա թե ինչպիսի խնդրի վրա: Շրջանային վորոշ աշխատողներ, վորոնք այնքան ել լավ չեն հասկանում բուն կուսակցական աշխատանքից, իրենց անճարութիւնը և անձեռնբեցութիւնը կուսուսուցման գործում սիստեմատիկ կերպով սքողում են այնպիսի անհիմն և դատարկ պատճառաբանութեամբ, թե կենտրոնը ծրագրեր չի ուղարկել, դրա համար ել մեզ մոտ վատ է գործը:

Մասսայական ցանցի ծրագրերը լույս տեսան դեկտեմբերի սկզբներին ու անմիջապես տեղերն ուղարկվեցին: Մինչ այդ մենք տեղերն ուղարկեցինք նախնական ծրագիր, մատնանշելով հայերեն լեզվով յեղած գրականութիւնը: Այդ որվանից անցել է ութ ամիս, մինչդեռ չարունակվում են դանդաղներն այդ գծով:

Ի՞նչ կարծիքով այդ «փաստարկումները» պետք է մի կողմ դնենք, քանի վոր բոլոր շրջկոմները յեթե վոչ հայերեն, ապա ռուսերեն լեզվով ծրագրերն ստացել են համարյա ժամանա-

Ձին: Կարելի չէր տեղում կազմակերպել թարգմանութիւն և անգամ տպագրումն առանց սպասելու կենտրոնին: Անհրաժեշտ է, վորպեսզի կուսուսուցող աշխատողներն այս գործում հանդես բերեն մաքսիմալ նախաձեռնութիւն և ինքնուրույնութիւն, պահպանելով իհարկե ծրագրի անհրաժեշտ միասնութիւնը, հարմարեցնելով այն տեղի պայմաններին: Այս տարի մենք պետք է ծրագրային ուղղութեամբ առաջին հերթին ապահովենք կուսութեան խմբակները, մասսայական ցանցի մյուս ողակները և ապա առարկայական միավորները:

Այս կապակցութեամբ պետք է նշենք մի աննորմալ իրողութիւն, իրողութիւն, վորի վերացման համար մենք պետք է լրջորեն մտածենք: Խոսք այն մասին է, վոր կուսակցական թեկնածուների նշանավոր մասը, և անգամ կուսանդամներից և շրջանային ակտիվից վումանք, իրազեկ չեն մեր կուսակցութեան կանոնադրութեան ու ծրագրին: Շատերը նրանցից, չնայած վոր միջանի տարի յե, ինչ կուսադրքերում են, բայց և այնպես պարզ պատկերացում չունեն կուսակցութեան կազմակերպական սկզբունքների, նրա գործունեութեան ձևերի ու մեթոդների և անգամ նպատակի մասին: Անհրաժեշտ է ամառվա ընթացքում այնպես դնել աշխատանքը, վորպեսզի մինչև աշուն կուսակցութեան կանոնադրութեան ու ծրագրերը, հետագայում նաև կոմիտեերի ծրագրերը՝ կապակցված «կոմունիստական կուսակցութեան մանիֆեստի» հետ, ուսումնասիրութեան և մշակման յենթարկվեն կուսուսուցման բոլոր սղակներում:

Այս կարևոր քայլը կատարելու համար մենք վոչ մի դժվարութիւն չունենք. միայն հարկավոր է ցանկութիւն և բայը և ինչն էր կուսակցական յեռանդ, և մենք ռեալ արդյունքի կհասնենք մոտակա ժամանակներում:

Անցյալների համեմատութեամբ այս տարի մենք կարողացանք հիմնականում պահպանել ցանցում այն կոնախնդները, վորի մասին մենք արտահայտվեցինք վերևում: Հակա-

ուսկ ուրիշ տարիները, այս անգամ մեզ մոտ հոսունությունը նշանակալի չափով իջավ: Սովորողները հոսունության դորձում կան մի շարք սրտաճանրեր, սակայն դիտարկումն այն է, վոր մենք դպրոցը պարապմունքները չենք հարմարեցնում արդյունաբերության (հերթերին, բրիգադներին և այլն) և ձեռնարկության յուրահատուկ պայմաններին. այս մի կողմից. և մյուս կողմից, պարապմունքները տարվում են անհետաքրքիր, սովորողները ձանձրանում են և հրաժարվում ժամանակ կորցնելուց այնպիսի մի խմբավարի մոտ, վորն ինքր տակավին կարիք է զգում սովորելու իր սովորեցրածը: Կազմակերպված դաստիարակչական, և՛ վաղ սպառնացող վարչարարական պայքար հասունության դեմ: Վերջերս մի շարք վարչերում հաճախ հեռացնում և կամ «կոնդակերպական» միջոցներ են ձեռք անում՝ դպրոցների պարապմունքից բացակայողները դեմ: Մենք չպետք է այդ մեթոդը խրախուսենք, մանավանդ վոր ընկերները չեն սպառում դաստիարակչական բոլոր միջոցները:

Դաստիարակել, համոզել, կոնկրետ և պարզ ազիտացիա մզել, համբերությունը բացատրել: Այսպիսի հրահանգ տվեց մեզ մեր կենսականի և կՎՀ-ի միացյալ պլենումը: Մանրության կենտրոնը պետք է դրվի աշխատանքի նոր մեթոդների վրա: Չի կարելի հեռացնել կուսակցությունից պիտանի և անդամության արժանի թեկնածուի, վորը չի համարել միջանի պարապմունքի: Նրան պետք է ընձեռել պայմաններ սովորելու, կարգալու համար: Հետաքրքրվել անձամբ, գրտնել բացակայության պատճառները և աշխատել վերացնել այդպիսիք: Այսպես պետք է մոտենալ խնդրին:

9. ՎՈՐԱԿԸ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ, ԱՆՈՂՈՔ ՊԱՅՔԱՐ ԼԵՆԻՆԻՉՄԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Կուսակցական և անկուս ընկերների այն քանակը (25 հազար), վորը մենք այս տարի ներգրավել ենք մարքս-լենինյան դաստիարակության մեջ, աննշան թիվ չէ: Այդ ընդ-

գրկումն այսոր ավելի մեծ արդյունք կտար, յեթե մենք մեր ուշագրության առանցքը դարձնեյինք ուսուցման վարակը:

Ինչպես հիշատակեցի, այստեղ մենք խոչոր չափով կողում ենք: Մենք պետք է մեր կուսակցությանն ասենք, վոր մարքս-լենինյան ուսուցման վարակը հեռու յե մեր եպոխայի օրահանգներին բավարարելուց, և մենք կգործադրենք բոլոր ջանքերն այդ թերությունը վերացնելու մեկընդմիջո: Այս տարի ինչ գնով էլ լինի, մենք պետք է բեկում ստեղծենք վորակի գծով: Տեղերում յերբեմն տարվում են թվերի հմայքով և բաց են անում աշնանը այն քանակությամբ դպրոցներ, վորոնց ղեկավարման համար իրենք դեռ պատրաստված չեն: Ուղարկում են պարապելու անվորակ պրոպագանդիստին, վորը անձարակ է անգամ ունկնդիրների տարրական հարցերին պատասխանելու: Միքանի պարապմունքից հետո դպրոցը հալչում է, և դրա հեռ միասին մասսաների աչքում վարկաբեկվում է լենինիզմի թեորիան: Պետք է վերջ տալ այս պրակտիկային: Մենք չպետք է մոռացուցանենք տանք Լենինի ներքոհիշյալ միտքը.

«Պետք է կանոն ընդունել՝ ավելի լավ է քվով քիչ, իսկ վորակավ ավելի քարձր: Պետք է կանոն ընդունել՝ ավելի լավ է յերկու տարուց հետո կամ նույնիսկ յեթե տարուց հետո, քան հապնեպ, առանց վորևե հույսի, մարդկային լուրջ նյութ ստանալու»*):

Հենց կուսուսուցման սիստեմը կոչված է մարդկային ամենալուրջ նյութը տալու մեր յերկրին՝ կուսի և կոմիտե կուսակցականներին լենինիզմի վորով, նրանց դարձնել տոկուն և հետևողական բայլչեիկներ: Չի կարելի աչք փակել այն իրականության առաջ, յերբ մեր շատ կազմակերպություններ միանգամայն աչքաթող են անում Լենինի կողմից նշված կանոնը դաստիարակության բնագավառում: Ուսման վորակի հարցում վնասակար դերը պատկանում է պրոպագանդիստին: Մակայն այս մասին հետո:

* Լենին, «Պետտպարատի բարելավման մասին», էջ 99.:

Սակավ չեն մարքսիզմ-լենինիզմի կատարյալ աղճատման
դեպքերը կուակրթության միավորներում :

Սյուպես, որինակ, Արթիկի շրջ. պրոպագանդիստների
խորհրդակցության վերջին մեջ կարգում ենք .

«Մի շարք դպրոցի վարիչներ սխալ դիրքավորում են
տվել այս կամ այն թեման անցնելու ժամանակ . որի-
նակ՝ Գաղակցություն կուակրթության սխալ բնորո-
շումը, կապիտալիզմի հակասությունների վերացումը,
հացի պրոբլեմի լուծումը, ազգային հարցում սխալ
դիրքավորումը» և այլն :

Ճիշտ է, այս գրված է բավական վերացական և ընդհա-
նուր, — թեկուզ և վորոշ չափով անզբաղեատ, — բայց
ակնհայտ է մի բան, վոր այդ հրատապ խնդիրները լուսաբա-
նելիս պրոպագանդիստներից վրձանը սայթաքել են :

Լենինականում, յերկաթգծում, խմբակավար Հովնան
Յեղոյանը «սովորեցնում են» .

«Մենք այժմ ապրում ենք ազրարային յերկրում,
իսկ 2-րդ հնդամյակում կապրենք ինդուստրիալ-ազ-
րարային յերկրում : Յերկրորդ հնդամյակում բոլոր
գյուղացիները կլինեն Մոլոտովի պես : Կոլխոզում դա-
սակարգային պայքար բնազդաբար է կատարվում և
կոլխոզից դուրս միջակ գյուղացիութենը կապիտա-
լիզմի փոքրիկ ոգնականներ են» և այլն :

Վեր է ամեն կասկածից, վոր վոչ թե կիսազբաղեատ բան-
վորը, այլև անդրազեատ գյուղացին չի հավատա այս վտան-
գավոր գառանցանքին : Վեր է ամեն կասկածից, վոր այս-
պիսի պրոպագանդը հոնքը շինելու տեղ աչքն է հանում :
Այդ վո՞ր գյուղացին է, վոր կհավատա ընկ . Յեղոյանին, թե
2-րդ հնդամյակում բոլոր գյուղացիները կդառնան Մոլո-
տովներ :

Կամ մի ուրիշ որինակ : Աշտարակի սպառնալի կուսուսուց-
ման խմբակում ունկնդիրներից մեկը պնդում է, վոր իբր թե
«մինչև Համ . Կենտկոմի վերջին վորոշումը առևտրի մասին՝
կուսակցության գիծն այդ բնագավառում յեղել և սխալ» :

Աշտարակի կոլխոզին կից քաղխմբակի մի անդամ դռնում
է, վոր «Դաշակցությունը պայքարել է ցարիզմի դեմ և նա
հետևողականորեն — հեղափոխական կուսակցություն է յեղել» :

Ահա ձեզ մի քանի փաստեր, վորոնք լիովին արոցկիզմի
զինանոցից են վերցված, և վորոնք հրամցվում են մեր ցան-
ցի ունկնդիրներին վորպես լենինիզմի պրոպագանդ :

Բասարգեչարի շրջանի, Կրխբուլախ գյուղի նախնական
կուսակրթոցի ուսանող, նույն գյուղի ուսուցիչ Վարդգես Ա-
վետիսյանը ասում է պարասյունների ժամանակ .

«Առանց միջազգային բանվոր դասակարգի անմի-
ջական ոգնության մեր յերկրում անհնարին է սոցիա-
լիզմի լիակատար կառուցումը» :

Նույն դպրոցի ուսանող Մեխակ Մակարյանը պնդում է,
վոր՝

«Լենինը բայլելիկ է յեղել միայն ուսական պայ-
մաններում և այն ել 1914 թ. պատերազմից հետո» :

Միևնույն այդ շրջանի Ջիլլի գյուղի կուսակրթոցի դե-
կավար (միաժամանակ բջիջի քարտուղար) Սախիբբեկովը
սովորեցնում է .

«Մեր յերկրում սոցիալիզմ կառուցել անհնարին է,
բանի վոր սոցիալիզմի կառուցման համար մեզ մոտ
չկան բոլոր հնարավոր միջոցները . մյուս կողմից՝ մեզ
մոտ ապրանքային կրիզիս է . նախ պետք է բավարա-
րենք մեր ներկա պահանջները, վորից հետո նոր մտա-
ծենք սոցիալիզմի կառուցման մասին» :

Ինչ խոսք, վոր տեղական կուսակցական կազմակերպու-
թյունների կողմից մերկացվել և պատշաճ հակահարված են
ստացել այս քարոզները, վորոնք մինչև վերջը ուղղված են
լենինիզմի դեմ, թեկուզ և վորոշ դեպքում հեղինակի ան-
գիտության հետևանքով : Յերևույթն ինքնին խիստ ուշա-
գրավ է, վորը կրկին անգամ մեզ հիշեցնում է ընկ . Ստալինի
«Пролетарская революция»-ին ուղղված նամակի հույս
կարևորությունը և հրատապ լինելը :

Այս փաստերը խոսում են ամենից առաջ մեր ուսման վորակի

մասին: Պետք է լուրջ մաածել և ձեռք առնել բոլոր նպատակահարմար և անհրաժեշտ միջոցները, վորպեսզի ժամանակին պայքար ծավալվի մարքսիզմ-լենինիզմի և կուսակցութեան գծի այսորինակ խեղաթյուրումների դեմ: Այս իսկ հողմի վրա անդերում չեն դարձնում հարկ յեղած ուշադրութեամբ: Շնորհիվ կոնտրոլի բացակայութեան, յնկ. Յեղոյանի նման «պրոպագանդիստներ» վորոշ վայրերում դեռ մնում են դաստիարակի և պրոպագանդիստի կարևոր պոստում ու շարունակում «լենինիզմի» այսորինակ ավանդումն ու կատարյալ խեղաթյուրումը: Յեթե մանրադնին ուսումնասիրենք մեր հեռավոր վայրերը, ապա անպայման կպատահենք 17-րդ կուսկոնֆերենցիայի «յեղոյան մեթոդով» մշակման նմուշների նաև ուրիշ շրջաններում:

Վորակը ուշադրության կենտրոնում:

Հսկողություն և ոգևոթյուն պրոպագանդիստին: Անդա՛ Կալիֆորնիայի լենինիզմի անադարտության համար:

Մեր հիշատակած թերութեանների շարքում առանձնապես աչքի յե ընկնում այն վոչ-հազվադեպ յերևույթը, յերբ ուսման վորոշ ողակներում թեորիան անշատում են պրակտիկից (Արթիկ, Ստեփանավան), տեսական պրոբլեմները չեն հագեցվում պրակտիկայի այրող քաղաքական խնդիրներով: Վերջերս կայացած պրոպագանդիստական խորհրդակցութեանները շրջաններում միաբերան արձանագրեցին վերոհիշյալ թերութեան անկախութեանը: Չպետք է մոռանալ այն, վոր այդ բացը «հղի յե մեծամեծ վտանգներով»:

10. ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆԸ

Դեռևս թույլ են կիրառվում սոցմրցումն և հարվածայնութեանը կուսուսուցման սիստեմում: Տվյալները ցույց են տալիս, վոր բոլոր շրջաններում, — մասնավորապես Ալլահ-վերդում, Բասարգեչարում, Դիլիջանում, Բայազետում և այլն, — այս կամ այն չափով տարածված է յեղել սոցմրցակ-

ցութեանը: Սակայն այստեղ մենք պետք է ասենք, վոր դեռ շատ բան կա հին շաբլոնից, վորը մեզ կապարի պես մնում է պարագմունքների պահին և վոր աշխատանքի այդ նոր ձև-վերը դեռ հեռու յեն տիրապետող լինելուց: Իսկ մենք ստեն կերպ պիտի ձգտենք այդ բանի վերացմանը, և պարագմունքի մեթոդների լայնացմանը:

Յեթե մենք հիմք ունենք այստեղ խոսելու մարքս-լենինյան դաստիարակութեան նշանակալի հաջողութեանների մասին, ապա այդ բանը մեզ բնավ իրավունք չի տալիս մաղաչափ անգամ աչք գոցելու այն փաստի հանդեպ, յերբ մեզ մոտ այդ աշխատանքները ազգային փոքրամասնութեան մեջ միանգամայն անբավարար վիճակում են գտնվում: Չնայած Համ. Կ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումը հատկապես մեզ պարտավորեցրել էր կուսակցութեան ազգային փոքրամասնութեանների դեմոկրատիկ ել ավելի բարձրացնել դրույթական կուսակցությունների տեսական քաղաքական մակարդակը: Այստեղ մեզ հիմնականում խանգարում է քիչ թիվ շատ պատրաստված և քաղաքականապես դրազեա ընկերների ծայրահեղ պակասը:

Մենք պիտի խնդրենք Կենտկոմին, վորպեսզի աշնանը մեզ հնարավորութեան տրվի թուրք պրոպագանդիստներին վերապատրաստել տեղերում: Այստեղ վորոշ, բայց վոչ վճռական դեր է խաղացել նաև դրականութեան ուշացումն ու անբավարար քանակը: Մեր կազմակերպութեաններն անբավարար ուշադրութեան են նվիրում այս կարևորագույն կետին: Մինչդեռ, յեթե մենք ոգտագործենք բոլոր ուժերն ու միջոցները, կարող էլինենք յեթե վոչ այս ամառը, ապա դեթ աշնանը զգալի տեղաշարժ տալ այս ուղղութեամբ: Ազգային փոքրամասնութեան կոմունիստական դաստիարակութեան վրա ավելի մեծ ուշադրութեան պիտի դարձնենք, քան մինչև որս:

Ընթացիկ տարում կուսուսուցման թույլ ողակներից մեկն է մնում տրանսպորտը: 1931-32 թ. աշնանը կադմու-լերպոված ցանցը ձմեռվա կեսերին վոչ միայն Սանահինում, Յերևանում, այլև մասամբ Լենինականի դեպոյում, դադարել

եր գործերուց : Սրա դիտարկը պատճառն այն էր, վոր ուսուցման միավորները կազմակերպված էին վոչ թե ցեխային արտադրական սկզբունքով, այլ հավաքական : Չի յեղել դիֆերենցիալ մոտեցում սովորողներին . կիսադարձելուն նստեցրել էին յերեք տարի կուսդպրոցներում սովորած ակտիվ բանվորի կողքին : Թեկնածուներին առանձին ուշադրություն չեն դարձրել : Տեխնիկայի տիրապետման հանդուցային խրնդիրներն անտեսվել են կուսուսուցման ցանցում : Սոցմըցումը կրել է ձևական բնույթ :

Այս գարնանը կենսկոմը ունի ողնություն ցույց տվեց յերկաթուղու կուսկազմակերպությանը : Մենք գարնանն ուղարկեցինք Յ հոգուց բաղկացած մի պրոպիամբակ, վորը մի ամսվա ընթացքում իսկապես վերակազմակերպեց ուսումնական սխտեմը և աշխատանքները դրեց նորմալ հունի մեջ : Յերկաթուղու մեր ընկերները Անդրյերկոմի վորոշումից հետո սկսեցին շոշափելի քայլեր անել այս ուղղությամբ : Պետք է շարունակել խորացնել ստեղծված բեկումը : Մենք պետք է կրկին ողնենք յերկաթուղու կազմակերպություններին ամառային ուսուցումը նոր բարձրության վրա դնելու նպատակով : Անհրաժեշտ է, վոր Լենինի մի կուլտ-պրոպը ավելի քան զբաղվի տրանսպորտի կուսկազմակերպության մարքս-լենինյան դաստիարակության հարցերով :

11. ԿՐԿՆԱԿԻ ՀՈԳԱՑՈՂՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՐԱՍՏԵՆՔ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ, ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՅԵՎ ԸՆԴՈՒՆԱԿ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐ

Այժմ անդրադառնանք այն խնդրին, թե վորոնք են մեր դիտարկը անելիքները մարքս-լենինյան դաստիարակության ասպարեզում : Սրանից առաջ մենք հարևանցիորեն անդրադարձանք կուսուսուցման վորակին և պրոպագանդիստական ուժերի խնդրին : Հիմա պետք է հանգամանորեն այդ հարցը դնել ձեր առաջ :

Ինձ թվում է, վոր մարքս-լենինյան ուսուցման ամենանեղ տեղն այսօր, դա պրոպագանդիստական ուժերի խնդիրն է :

Նախ և առաջ, վորչ մի վայրում մենք չունենիք լիակատար հաշվառման այն կուսակցական ուժերի, վորոնք առավել թե նվազ չափով կարող են աշխատել այդ ուղղությամբ : Այժմ ևեթ բազմակողմանի հաշվառման պրոպագանդիստական ուժերի և մշտական պլան նրանց իրենց կարողությունների համեմատ ոգտադորձելու համար : Սա առաջին լուրջ հարցն է, վոր պետք է լուծենք վոչ ուշ, քան ոգոստոսի 15-ը : Այնուհետև, պրոպագանդիստական ուժերի ընտրությանը մեր տեղական կուլտ-պրոպ աշխատողները գրեթե նշանակություն չեն տալիս : Ընտրությունը կատարվում է «ժառանգաբար» ստույգված ցուցակի հիման և վոչ թե կենդանի մարդկանց գործնական փորձի վրա :

Սխալվում են նրանք, ովքեր ուսուցման գործի հաջողության դիտարկը գրավականը համարում են ծրագրերի և մեթոդական գիտելիքների առկայությունը : Տվյալ ուսումնական միավորների գործունեություն իսկական էությունը պայմանավորվում է ամենից առաջ դասատուական կազմով : Այս առթիվ մենք ունենք ընկ. Լենինի սպառիչ կարծիքը : Դեռևս 1909 թ. Կապրի կղզու կուսդպրոցի ուսանողներին դրած իր նամակներից մեկում Լենինն ասում է .

«Յուրաքանչյուր դպրոցում ամենակարևորը դասախոսության բաղաձայն-գաղափարական ուղղությունն է : Ինչով է բնորոշվում այդ ուղղությունը : Անբողջապես և բացառապես լեկտորների կազմով : Դուք շատ լավ հասկանում եք, ընկերներ, վոր ամեն տեսակի «կոնտրոլ», յուրաքանչյուր «գեկալարություն», ամեն տեսակի «ծրագրեր», «կանոնագրեր» և այլն, այդ ամենը լեկտորական կազմի համեմատությամբ դասարկ հեշտուններ են : Վոչ մի կոնտրոլ, վոչ մի ծրագիր բացարձակապես իվիեակի չե փոփոխելու պարապմունքների այն ուղղությունը, վորը վարուվում է լեկտորներով :

Դպրոցի իսկական բնույթն ու ուղղությունը վորոշվում է վոչ թե տեղական կազմակերպությունների

բարի ցանկուրյուններով, վարչումներով, սովորու-
ների «խորհրդով» կամ ծրագրերով, «այլ լեկտուրների
կազմով»^{*)} :

Ի՞նչը նկատում եք, թե լեհները վորպիսի վճռական նշա-
նակույթյուն եր հատկացնում լեկտորական-պրոպագանդիս-
տական կազմին : Յեթե մենք կուս. նախնական դպրոցում ու-
նենք քաղաքականապես պատրաստված և գործունյա պրոպա-
գանդիստ, ապա մինչև ծրագրերի և դասագրքերի լույս տես-
նելը նա ինքը կանի այդ ինքնուրույն կերպով, Մարքսի, Լե-
նինի և ընկ. Ստալինի աշխատությունների ու կուսակցութեան
ընկալելի վորոշումների հիման վրա : Առանձին ծրագրեր պետք
չեր վորպեսդի Գիլլիջանի ազիա-մաս բաժվարը կազմակերպեր
զեթ մի խմբակ Լեհների առաջին հատորը, «Պետություն և հե-
ղափոխություն»-ը կամ ընկ. Ստալինի «Լեհներգծի հարցերը»
և կամ թե «Ազգային հարցը» ուսումնասիրելու համար : Հենց
տեղերում չի արվում այդ «աննշան», բայց կարևոր աշխա-
տանքը . Բլիշների քարտուղարների դասընթացներում Յերե-
վանի կոմիտեն պատրաստված լեկտորների միջոցով ման-
րազնին մշակում է «Կոմ. կուսակցութեան մանիֆեստը» և
Կոմիտեների ծրագրերը : Այս բանը կարող եր անել նաև Արթի-
կի չրջկոմի ազիա-բաժինը, փոխանակ Տյումենսկի դրբերով
նախնադարյան կոմունիզմ «ուսումնասիրելու» :

Մրանով յես չեմ ուզում ասել, թե մենք չպետք է ուսում-
նասիրենք պատմությունը : Այդպես գնել հարցը՝ նշանակում
է մեղանշել մարքսիզմ-լենինիզմի հիմնական սկզբունքներից
մեկի դեմ : Սակայն ամբողջ խնդիրն այն է, վոր մենք այն-
պես պիտի ուսումնասիրենք պատմական անցքերն ու փաստե-
րը, վորպեսդի դրանից ուժ քաղենք սոցիալիստական մեր ար-
չափն ավելի հաջող առաջ տանելու համար :

Ինչ գնով ել ուզում է լինի, մենք պետք է լուրջ միջոցներ
ձեռնարկենք, վորպեսդի պրոպագանդիստական (բանվորնե-
րից) նորանոր կադրեր պատրաստենք և վերապատրաստենք
յեղաձևերին : Չպետք է անտեսել այն անորմալ յերեույթը,

յերը վորոշ հին բայլելիներ չեն ներգրավված մեր դաստիա-
րակչական ցանցում : Մինչդեռ այդ կարևոր է և անհրա-
ժեշտ : Այս ուղղությամբ պետք է մտածել և գործնական ար-
դյունքների հասնել :

Շատ անգամ են դանդաղում այն մասին, թե պրոպա-
գանդ անելու կարող ընկերներ չկան տեղում : Այդ այնքան
ել ճիշտ չէ : Յերը ստուգում ես, յերևում է, վոր չըջանի պա-
տասխանատու և կարող ընկերներ՝ յես կասեյի՝ խոշոր մասը
չեն ոգտագործվում կուսուսուցման ցանցում : Յեթե մենք
կազմակերպենք յեղամ ուժերի ճիշտ ոգտագործումը և նրանց
վերապատրաստումը, ապա մոտակա ժամանակամիջոցում
մենք անհամեմատ լավ կդնենք մարքս-լենինյան դաստիարա-
կութեան գործը :

«Մեր յսնդիրն այն է, վորպեսդի մեկ ոգտագոր-
ծենք ուժերի այն հսկայական պաշարը, վորը մեկ
ունենի : Սակայն մեկ դեռ ամբողջ չենք ոգտագոր-
ծել» (Կազանովիչ) :

Իհարկե, սխալ կլինեն ասել, վոր յեթե կան պրոպագան-
դիստներ, ապա լենինյան ուսուցումն հաջող տանելու հա-
մար այլևս և վոր մի միջոց պետք չէ : Անհրաժեշտ են նաև
ուրիշ նախադրյալներ : Բայց խնդիրն այն է, վոր ներկայումս
մեզ համար վճռական ողակն է այդ, վորին մենք պետք է
կառչենք : Պետք է կուրս վերցնել պրոպագանդիստներին
կատարաստել տեղում այնպես, ինչպես կատարում են Ալլահ-
վելդին, Բալադետը, Գորիսը և այլն : Կարևորը մեկ կամ յեր-
կու վճարովի պրոպագանդիստները չեն : Կարևորը կուսակ-
ցական կայուն և կուրված պրոպագանդիստների կոլեկտիվն
է, վորը մենք ունենք, բայց չենք կազմակերպել ու սովորեց-
րել : Մենք չենք կարողացել դեռևս մինիմալ չափով ապահո-
վել պրոպագանդիստական ուժերի հրահանգումն ու նրանց
մեթոդական-տեսական սեմինարների կազմակերպումը :

Ճիշտ է, մի շարք չըջաններում այս տարի հաճախ հրա-
վիրել են պրոպագանդիստների խորհրդակցություններ ու
սեմինարներ : Այդ քիչ է : Պետք է ձգտել նրան, վորպեսդի

*) Ленин, том XIV, стр. 118—120

ամեն մի պրոպագանդիստ պարապմունքի գնալուց առաջ անցնի նույն խնդիրը սեմինարում, կոնսուլտացիաներում և պարզորոշ պատկերացում ունենա քննվող խնդրի մասին: Այստեղ պետք է նկատել, վոր մենք դեռևս չենք կարողացել այնպես դնել գործը, վոր պրոպագանդիստը մեծ սիրով և հոծարակամ հանձն առնի մինչև վերջը պարապելու ամբողջ խմբակի կամ դպրոցի հետ: Չնայած վոր բոլոր կուսկազմակերպութիւններն եւ ունեն նյութական միջոցներ, բայց դուք չէք գտնի և վոչ մի տեղ, ուր պրոպագանդիստները հասուցում ստանան իրենց աշխատանքի համար, սխտեմատիկ կերպով: Մենք մեր պրոպագանդիստներին պիտի շահագրգռենք նաև նյութապես: Այս բանը կարևոր է: Մենք պետք է լավ պրոպագանդիստին միջանի անգամ առէլի՝ վճարենք, քան վատին և դիմադուրկին: Մենք պետք է խրախուսենք լավագույններին այդ դժով ևս: Ամիսը յերկու անգամ կարմիր տախտակին հանելով նույն պրոպագանդիստին՝ գործը լիովին չի գնա առաջ:

Յեթե մենք կատարենք,—իսկ մենք պետք է կենսադործենք լիովին,—լենինի ներքոհիշյալ գրույթը, ապա ընթացիկ տարում հսկայական առաջխաղացում կունենանք պրոպագանդիստական ուժերի վորտկի բարձրացման բնագավառում: Լենինն ասում էր.

«Պետք է ջանալ ըստ հնարավորութեան ավելի լիակատար կերպով կիրառել աշխատանքի բաժանումը, հիշելով, վոր հեղափոխական աշխատանքի տարբեր կողմերի համար հարկավոր են տարբեր ընդունակութիւններ, վոր յերբեմն կազմակերպական գործի համար անպետք մարդը անփոխարինելի ազիտատոր կլինի, կամ խտտագույն գաղտնապահ գործին անընդունակ մարդը հիանալի պրոպագանդիստ կլինի:

Ի դեպ, պրոպագանդիստների առթիվ յես կկամենայի միջանի խոսք ասել ընդդէմ այն յերևույթի, յերբ սովորաբար այդ պրոփետիան յցնում են չափազանց անընդունակ մարդկանցով և դրանով իսկ ցածրացնում

պրոպագանդի մակարդակը: Մեզ մտտ հաճախ յուրաքանչյուր ուսանող անխտիր պրոպագանդիստ է համարվում, և վոչ յերիտասամիդութունը պահանջում է վորպեսզի իրեն «խմբակ տան»:

Իրա դեմ պետք է պայքարել, վորովհետև դրանից շատ վնաս է ստացվում: Իրոք, սկզբունքային հետևողական և ընդունակ պրոպագանդիստներ շատ քիչ կան (և վորպեսզի այդպիսին դառնա, պետք է բավականին սովորես և փորձ ձեռք բերես) և այդպիսի մարդկանց պետք է մասնագիտացնել, գրադեցնել նրանց ամբողջովին և կրկնակի հագացողութեամբ պահպանել: Պետք է շարաթական միջանի դասախոսութիւն կազմակերպել այդպիսի անձանց համար և ժամանակին ուղևորել այլ քաղաքներ», և այլն:

Այստեղ և վոչ մեկը չի կարող մեզ կոնկրետ կերպով ասել, վոր ինքը այսպես է մոտեցել պրոպագանդիստին:

Չիսնայել և վոչ մի ջանք բարձրորակ և փորձված պրոպագանդիստներ ունենալու, նրանց պահպանելու համար: Սա յե որվա խնդիրը:

Այստեղ շատերը կխոսեն ուսման վորակի մասին: Այդ լավ է: Բայց այդ խոսակցութիւնից հետո յեթե մենք չզգտնենք վորակի բանալին, ապա իսկական, սխտեմատիկ և խորացրած մարքս-լենինյան դաստիարակութեան մասին խոսք լինել չի կարող: Բանալին՝ պրոպագանդիստի վորակն է և նրանց աշխատանքի բայջևեղիկան և վոչ աբլումովյան կազմակերպումը: Այստեղ է, վոր մենք պիտի կենտրոնացնենք մեր ջանքերն ու գործնական ուշադրութիւնը:

12. ԿՈՒՍՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ՄԱՐՔՍԻՉՄ-ԼԵՆԻՆԻՉՄԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԻ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՎՐԱ

Յես ասացի, վոր մենք դեռ լիովին չենք իրադործել Համ. Կ(բ) կենտկոմի հոկտեմբերի 31-ի և Հայ. ԿԿ 8-րդ համագումարի վորոշումները դուրսկան կուսկազմակերպութիւնը, թեկնածուներին առաջին հերթին, մարքս-լենինյան

դաստիարակութեան ցանցում ներգրավելու մասին: Ինչպես այս ամառը, նմանապես և մոտակա աշնանը հտառուկ ուշադրութեամբ թեկնածուների ուսմանը: Պետք է ամենուրեք ծավալել թեկնածուական խմբակների ցանցը:

Սակայն գործը ցանկալի բարձրութեան վրա դնելու համար բավական չէ միայն կադակներ պելլ: Պետք է կազմակերպել ընդհանուր դիֆերենցիալ մոտեցում ունենալ սովորողներին, հաշվի առնելով նրանց վոչ միայն կրթական-բաղաճական մակարդակը, այլ նաև նրանց աշխատանքի բնույթն ու վայրը, նրանց, յեթե կուզեք, բնակարանային պայմանները: Կուսուսուցման միավորները մենք պիտի կազմակերպենք ըստ ցեխերի, հերթերի և բրիգադների: Մենք պիտի պարապմունքները տանենք այնտեղ (յերբեմն հանրակացարանում), ուր բանվորներին և կոլտոգնիկներին (դաշտում) հարմար է և դյուրին:

Պետք է վերջ տալ այն պրակտիկային, յերբ ուսուցման բոլոր միավորները վերածվում են այսպես ասած «քաղխմբակների», և միևնույն կուսակցական բնիկերը սովորում է յերեք տարի նույն այդ «քաղխմբակում»: Անհրաժեշտ է պահպանել այն աստիճանական վարճացումը յուրաքանչյուր սովորողի համար, վորը նախատեսված է մեր սխառնում, Պետք է այնպես դնել կոմպլեկտավորման գործը, վոր թեկնածուական խմբակից ամյալ բնիկերը հասնի անպայման զիջերային կուսխորհրդային դպրոց և դրանից ել վեր: Յանցի ճիշտ և դիֆերենցիալ կոմպլեկտավորումը վճռական նշանակութուն ունի մարքս-լենինյան ուսուցման գործում: Այս կապակցութեամբ անհրաժեշտ է հատուկ ուշադրութեամբ նվիրել բանվորուհիների և գեղջկուհիների կոմունիստական կրթութեանը:

Պետք է վերջ տալ այն պրակտիկային, վորը շարունակվում է տեղերում. կուսուսուցման նախում են իբրև ժամանակավար և կամպանիոն մի բանի: Կուսակցական վերադաս ֆարմինները բազմիցս ընդգծել են կուսուսուցման սեզոնային տրամադրութեանների դեմ պայքարելու անհրաժեշ-

տութեանը: Մարքս-լենինյան դաստիարակութեանը պետք է տարվի ամբողջ տարվա ընթացքում: Այստեղ դժվարութեանը այն է, վոր մենք չենք կարողանում ուսման ձևերն ու մեքոդները այնպես ֆիզուն կազմակերպել, վորպեսզի ապահովենք բերրի կապը պրակտիկայի հետ: Նայած արտադրութեան բնույթին, նայած տարվա յեղանակներին, մենք պետք է դասավորենք մեր կրթութեան սխառնը, վորպեսզի մինիմալ ուժերի և ժամանակի վատնումով մաքսիմալ արդյունք ստանանք: Հատկապես ամառվա ընթացքում մենք պիտի լայն կերպով ծավալենք ընթացիկ քաղաքականութեան, 17-րդ կուսկոնֆերենցիայի ուսումնասիրութեան և դանազան առարկայական խմբակները:

Անհրաժեշտ է լայնորեն կիրառել մասսայական ուսուցման նոր ձևերը: Հրայիրել հարվածայինների կուրս-կոնֆերանսներ, ախարիլի սեմինարներ, 10-որդա և 5-որդա դասընթացներ, մեկորդա կուսգալոցներ, քաղմարտեր և այլն:

Ռուսաստանի փորձի ոգտադործումը մեզ համար խիստ կարևոր նշանակութուն ունի: Կուսակցական թեկնածուների կոնֆերանսները մեծ արդյունքներ են տալիս: Այդ բանը հաճախ պետք է անել:

Ձարգացման ներկա ետապում մեր կուսակցութեան առաջ իբ հասակովը մեկ դրվում է կոմյերիտմիութեան մարքս-լենինյան դաստիարակութեան հարցը: Այս կարևորագույն խնդրին մենք չենք դարձնում հարկ յեղած ուշադրութեանը, վոչ միայն մեր կոմբընիները, այլ անգամ շրջանային կուսմարմինները սխառնատիկ, հարուստ դեկավարութեան և ողնութեան ցույց չեն տալիս կոմյերիտմիութեան մարքս-լենինյան դաստիարակութեան գծով: Կոմյերիտմիութեան լենինյան դաստիարակութեանը, սոցիալիզմի համար մղվող կուսակցութեան և բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի մի անբաժան մասն է: Ուստի թուլացումն և թերացումն այստեղ գատապարտելի յե: Քանի վոր այստեղ կոմյերիտմիութեան լենինինյան դաստիարակութեան մասին մենք ու-

նենք առանձին զեկուցում, ապա յիս կանգ չեմ առնի այդ խնդրի վրա: Կոմյերիտմիութեանը մենք պիտի ոգնենք պրոպագանդիստներով, նյութապիս և քաղաքական ղեկավարութեամբ, յերիտասարդ սերնդի դաստիարակութեան գործը բարձրացնելու նպատակով:

Այս տարի մենք գյուղական վայրերում նորից պետք է կազմակերպենք շարժական կուսակցություններ այն գյուղերի համար, ուր կոմունիստների թիվը աննշան է և հնարավորութեամբ չկա մշտական ցանց պահելու: Փաստ է, վոր հեռավոր գյուղերում մենք կոմունիստներ ունենք, վորոնք վերջին տարիներում չեն սովորել վորևէ դպրոցում: Այս դեպքի բացը մենք պետք է ծածկենք:

Ժամանակն է, վորպեսզի կուսակցական կազմակերպութեաններն առանձնակի ուշադրութեամբ դարձնեն նորակառույցներին (Յեմչին, Ո Յերգես, Քանաքեռու և այլն) բանվորների մարքս-լենինյան դաստիարակութեան գործին: Ոգոստոս ամսվա ընթացքում մենք պետք է այստեղ նկատելի բեկում մտցնենք, և ապահովենք մասսաների վրա բայլելի մի քաղաքական ազդեցութեանը, և նրանց կունք սոցիալիզմի մեծ պլանները ժամանակին և լրիվ կատարելու, մեր դժվարութեանները հաղթահարելու և դեպի աշխատանքը կոմունիստական վերաբերմունք ունենալու վորով:

Կուսուսուցման բնագավառում մեր հերթական անելիքներից մեկն էլ գործի մեթոդական կողմի բարելավումն է: Շատ հաճախ «ակտիվ» մեթոդները, «գրույցները» վերածվում են «գասախոսութեաններին» և այդպիսով ձախողվում է դրսևորոցի վորակը: Այս բանը չկրկնելու համար պետք է շրջկոմներին կից այժմ և եթ կազմակերպել մեթոդ-բյուրոներ և կուսակցական կաբինետներ, վորոնց միջոցով անհրաժեշտ է ապահովել դասատուների հրահանգումն, զանազան պրոբլեմների մշակումն, ունկնդիրների և պրոպագանդիստների համար կոնսուլտացիաների կազմակերպումն և այլն:

Այս քայլը մենք պիտի անենք հենց այս խորհրդակցութեանից հետո: Միջանի կուսակազմակերպութեանների այս

ուղղութեամբ կատարած փորձը տալիս է լավ արդյունքներ (Յերեսն, Աշտարակ, Բայազետ, Լենինական, Ալլահվերդի): Այդ փորձը ծավալենք և խորացնենք ամեն տեղ:

Միջանի խոսք կուսակցական ակտիվի տեսական պատրաստութեան մասին: Մեր ակտիվի թերիական ուսուցման գործը դրված է միանգամայն անբավարար հիմքերի վրա, իսկ վորոչ տեղերում ուղղակի վորչինչ չի արված այդ դժով:

«Անհրաժեշտ է,—ասում է ընկ. Պոստիչեվը,—վոր ղեկավար աշխատանքի անցնող յերիտասարդ կադրերը թերետիկորեն կոմիսիա և բայլելիկյան տրագիկիաներով ու սկզբունքներով դաստիարակված լինեն:

Իմիջի այլոց հենց այս ընկերները, չորհրվ ծայրաստիճան ծանրաբեռնման, ամենից քիչ են ընդգրկված մարքս-լենինյան դաստիարակութեան սխանմում: Այս, հենց այս մեծ վտակ է»:

Այս վտանգը կանգնած է մեր դռանը, և այն հաղթահարելու մասին շրջանային կուսկոմիտեները պետք է կոնկրետ մտածեն և գործնական միջոցների դիմեն: Փորձը ցույց տվեց, վոր բազմաթիվ շրջաններում մենք իլիճակի չենք պահելու,—պիչերային տարեկան և 6 ամսյա,—կուսխորհրդային դպրոցներ: Կենտկոմում այժմ մշակվում է հատուկ ծրագիր այսպես ասած լենինիզմի դպրոցի համար, վորը պետք է սպասարկի կուսակցական միջին և բարձր ակտիվին շրջաններում: Մյուս կողմից անհրաժեշտ է պայքար մղել այն յերեուցթի դեմ, յերը շրջանային վորոչ ընկերներ, չնայած իրենց քաղաքական անբավարար պատրաստութեան, յեթե կարելի յե ասել, «անհրաժեշտ» են զգում տեղում սովորելու և միայն համաձայնվում են սովորել Սվերդլովի անվան կոմսամալարանում: Չե վոր դեռ ժամանակին Լենինն է ասել, վոր անհրաժեշտ է անողոք պայքար մղել կոմսնապարծութեան դեմ: Անհրաժեշտ է այնպիսի պայմաններ ստեղծել, վորպեսզի շրջանային կուսակախիվը հնարավորութեամբ ունենա կարգալու և պարապելու:

Այստեղ վորչ խնդիրը մեխվում է աշխատանքի խելոք

կազմակերպման մեջ: Սեպտեմբերից մենք պետք է շրջկենտրոններում կազմակերպենք «լենինիզմի դպրոցները» և ախարվին գլխավորն ընդգրկենք ուսման մեջ:

Այս տարվա մեր կազմակերպած զեկուցումները շրջաններում ցույց տվին, վոր այդ բանը պետք է շարունակել ու սխտեմի վերածել: Իսկ այդ բանը անելու համար կենտրոնի կուլտ-պրոպ բաժնին կից մենք պիտի ունենանք լեկտորական խմբակներ, վորոնք անընդհատ սպասարկեն գլխավորապես ախարվի ուսուցմանը տեղերում:

Նախապատրաստվում ենք 1933 թ. հունվարից կազմակերպել չորս (4) նոր II⁰ կուլտպրոցներ՝ Ղափանում, Արարանում, Բայազետում և Դիլիջանում: Այս դպրոցները մեկ գլխավորապես տալու յեն պրոպագանդիստական վորակյալ կազմեր: Այսպիսով, մենք միջանի ամիս հետո կունենանք ութը II⁰ կուլտպրոցներ իրենց տարբեր պրոֆիլներով:

Մեզ համար միանգամայն հասունացած է Լենինականում յերեկոյան կոմհամալսարան կազմակերպելու հարցը: Այս ուղղությամբ և արվում են նախնական քայլեր:

Մեր խոշոր նվաճումը պետք է համարել կոմհամալսարանի կազմակերպումը: Հայաստանի կոմհամալսարանը այժմ ընդգրկում է 120 հոգի: Առաջիկա ընդունելություններին պետք է ընդունենք 180 հոգի: Այսպիսով, այս տարվա վերջին մեր կոմհամալսարանը կունենա 300 հոգի առաջին և յերկրորդ կուրսերում:

Զգալի աշխատանք է կատարում մեր հեռակա կոմհամալսարանը, վորն ընդգրկել է 400 հոգի: Անց են կացված հեռակա յոզների կոնֆերանսներ տեղերում:

Խորհրդակցությունը պետք է պահանջի, վորպեսզի կուլտուրացման ցանցում լայնորեն կիրառվի սոցմրցումն ու հարվածայնությունը: Այս տարի սոցմրցման պայմանադիր եյին կնքել Ալլահվերդին ու Լենինականը, Բասարզեչարն ու Բայազետը, Դիլիջանն ու Աշտարակը: Բայց ստուգումներից յերևաց, վոր այդ պայմանադրերի մեծ մասը չի կիրառված: Սոցմրցումն ու հարվածայնությունը (իսկական հարվածայն-

նությունը) չափազույն չափանիչը պիտի լինի տվյալ կուլտուրացի աշխատանքը գնահատելու համար: Այստեղ պետք է հատուկ ուշադրություն դարձնել հաջող փորձի փոխանակման վրա:

Ով վոր հետևել է շրջանային մեր թերթերին, նա կհամոզվի, վոր կուլտպրոցյան այդ մեծ պրոպագանդիստն ու ախարատորը մենք շատ քիչ ենք ոգտագործում մարքս-լենինյան դաստիարակության գործի համար: Մինչդեռ հենց այժմ, յերբ վերակառուցում ենք մեր աշխատանքները, բացատրիկ նշանակություն է ստանում տեղական մամուլը և նրա միջոցով կոմունիստական դաստիարակության վիճակն ու յնդիրները լուսաբանումը: Վոչ թե մերթնդմերթ, այլ սխտեմատիկ կերպով, ոպերատիվ զեկալարությամբ, մեր թերթերը պետք է դրաղվեն և մեզ դրաղեցնեն մարքս-լենինյան դաստիարակության հարցերով: Յեկեք փորձի համար, — յեթե այդ լալ կատարենք, այս մեծ արդյունք կստանանք, — միջանի շրջաններում կուլտպրոցական ուսուցման յեթե վոչ բոլոր, այս մի շարք ողակների (գլխավորապես թեկնածուները) շեֆությունը հանձնենք տեղական թերթերին, և թոզ վերջիններս առանձնակի հոգան այդ մասին: Դուք կտեսնեք, յե ինչպիսի արդյունք կստանանք: Ինչո՞ւ չի կարելի թերթում ունենալ տեսական ուսուցման բաժին, վորի միջոցով պատասխանել սովորողներին հոզող և վիճելի հարցերին, նրանց մասնանչի դրականություն՝ տվյալ թեմայի կամ հարցի շուրջ: Պետք է գործադրել Վաղպատի «համբակի համար» թերթի փորձը, վոր իր ամեն համարում տպագրում է զալիք պարապմունքի ծրագիրն ու դրականությունը: Սրանք կոնկրետ յնդիրներ են, վորոնց լուծումը կախված է միայն մեզնից և մեր կամեցողությունից:

Չնայած մեր միջոցառումներին, անցյալ ուսումնական տարում տեխպրոպագանդին աննչան տեղ հատկացվեց մարքս-լենինյան դաստիարակության սխտեմի մեջ:

Մենք պետք է ձգտենք նրան, վոր կուլտուրացման տվյալ միավորի ծրագրում անդրադառնա տեխնիկան տիրապետելու

լողունդը: Վոչ հակադրել և վոչ ել նուշնացնել մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդը տեխնոպրոպագանդի հետ, այլ տեխ-պրոպագանդը դարձնել լենինիզմի մասսայական պրոպագանդի մի հատվածը, և տեխպրոպագանդի հարցերը պետք է լուսավորվեն լենինիզմի թեորիայի լույսով:

13. ՀԱՄԱՌ ՅԵՎ ԱՆՆԿՈՒՆ ՊԱՅՔԱՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ՆԱՏԻՈՆԱԼԻԶՄԻ ԴԵՄ, ՀԱՆՈՒՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ.

Վերջում յես կուզենայի ձեր ուշադրութեամբ հրավիրել յերեք կարևոր հարցերի վրա: Առաջին՝ անհրաժեշտ է դորձնական ջանասիրութեամբ ձգտել, վորպեսզի մարքսիզմը անվանովի և ուսումնասիրվի Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի աշխատութեաների և կուսակցութեան վորոշումների հիման վրա: Այս խնդիրը սուր է դրվում մասնավորապես ընկ. Ստալինի սրտմական նամակից հետո: «Պրոլետարական ռեվոլյուցիա»-ին ուղղված նամակը մեզ պարտավորեցնում է ավելի աշարուրջ և ավելի զգոն լինել դեպի անախի-նինյան թեորիաներն ու հակահեղափոխական տրոցկիզմի կոնտրաբանդի դեմ մղված պայքարը: Այդ նամակը, վորը մի նոր աստիճանի վրա դրեց մեր տեսական կուսակցական միտքը, պահանջում է ավելի քան սրել պայքարը կուսակցութեան պատմութեան, լենինիզմի կեղծման և աղճատման յերևույթների դեմ: Մյուս կողմից, մենք պետք է իսկապես բայլընկիյան սկզբունքային բարձրութեան հասցենք կուսակցութեան պատմութեան խնդիրների ավանդումն և ուսումնասիրութեանը: Կասկած չի կարող լինել, վոր այս տարի մեր ուսումնական բոլոր ծրագրերը և դասադրերը պիտի վերանայնուր ընկ. Ստալինի նամակի հիմնական սկզբունքների մեկնակետից: Ընկ. Ստալինի նամակը մեզ թելադրում է ավելի քան ուժեղացնել պայքարը յերկու փրոնտի վրա, կրակը կենտրոնացնելով տվյալ ետապի գլխավոր վտանգ աջ քեֆ-ման, «ճախ» խոտորումների և փտած լիբերալիզմի դեմ: Այս տեսակետից մենք պետք է ջանանք կուսուսուցման բոլոր

միավորները դարձնել բայլընկիզմի տրագիցիաները մարմնացնող, լենինիզմի հեղափոխական ուսմունքը կենսագործող ուրինակելի դարձնողներ:

Ընկ. Ստալինի նամակը «Պրոլետարական ռեվոլյուցիա-ին» մեզ պարտավորեցնում է նաև շեշտակի և անվերայ պայքար մղել դաշնակիզմի և նացիոնալիզմի բոլոր արտահայտութեանների դեմ՝ բարձրացնել և խորացնել մասնաների ինտերնացիոնալ դաստիարակութեանը: Այդ ուղղութեամբ կուսուսուցման ցանցի, կուլտ-պրոպ և ագիտ-մասյարների, բոլոր պրոպագանդիստների և ագիտատորների դերը մեծ է: Պետք է հիշել և ամեն անգամ բացատրել մասնաներին, — մանավանդ յերիտասարդ կադրերին, վորոնք չեն տեսել դաշնակներին անարդ ուժիմը, — վր

«Իդեոլոգիական ֆրոնտում, թշնամական իդեոլոգիական հոսանքների շարքում Հայաստանի բանվորութեան և ամբողջ աշխատավորութեան համար հիմնական թշնամիկն էլ և մնում է Դաշնակցութեանը...»

«Դաշնակցութեան անմիջական նպատակն է՝ հենված կուլակութեան և ընդհանրապես կապիտալիստական ելիտներին վրա լուսանց միջոցների վորևե խրտութեան, սկսած վնասարարութեանից մինչև ապրտամբական կուլակային յելույթների կազմակերպումը, — յանդարել սոցիալիզմի շինարարութեանը և «ուժեր պատրաստել» խորհրդային իշխանութեանը տապալելու համար»:

Այսպես եր դնում խնդիրը սրանից մեկ տարի առաջ, կուլտ-պրոպների նման խորհրդակցութեան Հայ.Կ(բ)ԿԿ Կուլտ-միտեյի քարտուղար ընկ. Խանյանը: Անհրաժեշտ է, վորպեսզի դաշնակիզմի և ընդհանրապես նացիոնալիզմի դեմ մղվող մեր պայքարի խնդիրներով հագեցնել յուրաքանչյուր յմբակի, յուրաքանչյուր դպրոցի տեսական պարապմունքները:

Չի կարելի կողքից անցնել այն իրողութեան, յերբ մեր մի շարք ընկերներ պրոպագանդիստներ հստակ պատկերա-

ցում չունեն «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի» մասին: Դեռ վրձանը կարծում են, վրձնը զարգացման տվյալ շրջանում մեր ստեղծած կուլտուրան սոցիալիստական չէ, այլ «պրոլետարական»: Վրձանը կարծում են, վրձնը սոցիալիստական կուլտուրան կլինի միայն լիակատար սոցիալիզմի ժամանակ, յերբ չի լինի պրոլետարական դիկտատուրան: Մինչդեռ ընկ. Ստալինը հակառակն է ասում:

«Ի՞նչ է ազգային կուլտուրան ազգային բուրժուազրայի տիրապետության պայմաններում: Բուրժուական իր բովանդակությամբ և ազգային իր ձևով կուլտուրա, վրձնը նպատակ ունի թունալորել մասսաները նացիոնալիզմի թուխով և ամբաստանել բուրժուազրայի տիրապետությունը: Ի՞նչ է ազգային կուլտուրան պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում: Սոցիալիստական իր բովանդակությամբ և ազգային՝ իր ձևով կուլտուրա, վրձնը նպատակ ունի դաստիարակել մասսաներին ինտերնացիոնալիզմի վրձով, սմբայնել պրոլետարիատի դիկտատուրան»:

Այնուհետև զարգացնելով այդ լենինյան դրույթը, ընկ. Ստալինը շարունակում է.

«Պայքարելով ազգային կուլտուրայի լուրջ դեմ բուրժուական կարգերում՝ Լենինը հարվածում էր ազգային կուլտուրայի բուրժուական բովանդակությանը և վրձնը նրա ազգային ձևին: Հիմարություն կլիներ յենքադրել, քե Լենինը սոցիալիստական կուլտուրան դիտում էր վարպետ Ա.Չ.Ս.Յ.ԻՆ կուլտուրա, վրձնը չունի այս կամ այն ազգային ձևը»:

Ահա թե ինչքան պարզ է դրված այնպիսի մի բարդ խնդիր, վրձնը սոցիալիստարական կուլտուրայի խնդիրն է ազգությունների գոյության շրջանում:

Իբրև լենինիզմի պրոպագանդիստներ մենք համառոտ են պետք է ներարկենք մասսաների դիտակցության մեջ ազգային քաղաքականության լենինյան սկզբունքները, անադոք:

և անհաշտ պայքարելով յերկու փրձնտի վրա ազգային քաղաքականության բնագավառում՝ վերլիկոուսական շովինիզմի, իբրև գլխավոր վտանգի և տեղական նացիոնալիզմի բոլոր արտահայտությունների դեմ:

Կուսակցական ուսման թույլ ողակներից մեկն էլ հենց ազգային հարցի մասին Լենինի ուսմունքի խորացրած ուսումնասիրության բացակայությունն է: Այս ուղղությամբ մենք այնտի կոնկրետ միջոցներ ձեռք առնենք, վրձնը մեր բոլոր ունկնդիրներին սեփականությունը դատնա մարքսիզմ-լենինիզմից: «Անկարծելա է ուժեղացնել ուշադրությունը դեպի լենինյան ազգային քաղաքականության խնդիրները՝ նրա անշեղ կիրառումն ապահովելու համար» (Խանջյան):

Կենտկոմի կուլտ-պրոպ բաժնի կողմից վերջերս կազմակերպված գեկուլցումները տեղերում յերևան հանցին, վրձնը 17-րդ կուսկոմի քերենցիայի վրձնումները շատ թույլ են մասսայականացված տեղերում: Անգամ ակտիվ շարքերում կան բավական ընկերներ, վրձնը բոլորովին մոլթ պատկերացում ունեն մեր յերկրի դասակարգային կառուցվածքի, 2-րդ հնգամյակում դասակարգերի վերացման, պետության ամրացման, կուսակցության դերի մասին 2-րդ հնգամյակում և այլն:

Անհրձեշտ է ամառվա ցանցում, ինչպես և աշանը, լայնորեն մշակել 17-րդ կուսկոմի քերենցիայի վրձնումները, կուսակցության մարտի 26-ի և հետագա վրձնումները կոլխոզ առևտրի, կոլխոզների ամրացման և բերքահավաքի մասին:

Յեթե մենք լավ դենք կուսակցական մասսաների դաստիարակության գործը, կոմբլիշներին աշխատանքը կազմակերպենք նոր ձևով, նրան գործնականապես և քաղաքականապես իր արժանի բարձրության դենք, ապա մեր ամբողջ կուս. աշխատանքը բառացիորեն միջանի անգամ վեր կբարձրացնենք: Դրա համար հարկավոր է կուսակցության անդամներին և թեկնածուներին բայլելիկորեն կոել ու դաստիարակել, սասում է ընկ. Կալանովիչը:

Ինչ խոսք, վրձնը մեր աշխատանքներին լնթացրում մեյ

անհրաժեշտ և կենսադրժեւ աշխատանքի լեւինյան վոճը : Դեռ
իր ժամանակին այս հույժ կարեւոր խնդրի վրա ընկ . Ստա-
լինը հրավիրում եր մեր յերիտասարդութեան ուշադրութեա-
նը : Ռուսական հեղափոխութեան քափը զուգորդել ամերիկյան
գործնականութեան հետ : Սա յե աշխատանքի լեւինյան վոճի
ընտրոջ կողմը : Գործունեութեան այս մեթոդն և , վոր մենք
պետք և յուրացնենք համառ և յերկարատե աշխատանքի պրո-
ցեսում : Այս հարցն առանձին կարեւորութեուն և ձեռք բերում ,
յերբ այն դեռում ենք կուսակցական վոլջ աշխատանքները
վերակառուցման տեսանկյունով :

Ի մի գումարելով մեր գործունեութեան դրական և բա-
ցասական կողմերը , մենք բայլչեիկյան ինքնաքննադատու-
թեան յայն ծավալումով կարգարացնենք մեզ իբրև իդեոլո-
գիական Ֆրոնտի աշխատողների , կվերակառուցենք մեր աշ-
խատանքը նոր ետապի նոր խնդիրների համեմատ և ել ավելի
կրարձրացնենք մասսաների մարքս-լենինյան դաստիարակու-
թեան գործը :

Հ . Կ . (բ) Կ . Կ . Կ . ԲՅՈՒՐՈՅԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ

(1931-32 թ . աշնան-ամեռային կուսակցական ուսուցման
արդյունքների և հետագա անելիքների մասին) .

Քննարկելով Կոմիտեյի կուլտ-պրոպ բաժնի գեկուցումը
1931-32 թ . աշնան-ամեռային կուսուսուցման արդյունքների և
լենինիզմի մասսայական պրոպագանդի հետագա անելիքները
մասին՝ Կենտկոմի Բյուրոն արձանագրում և .—

1 . Վոր 1931-32 թ . աշնան-ամեռային կուսուսուցման առ-
պարեզում Հայաստանի կուսակցական կադմակերպութեան-
ները ձեռք են բերել զգալի հաջողութեաններ՝ (բարձրացել և
կուսակադմակերպութեանները քաղաքական-գաղափարական
մակարդակը , հիշված շրջանում գործել են 912 կուսուսուց-
ման միավորներ 25.985 ունկնդիրներով ընդգեմ 1931 թ .
12,313 հոգու , վորից 13,000 կուսանդամներ և թեկնածուներ :
Մարքս-լենինյան դաստիարակութեան սիստեմում ընդգրկված
են կուսանդամների ընդամենը 52 տոկոսը , իսկ թեկնածու-
ների 66 տոկոսը , պրոպագանդիստական ուժերի աճումը և
սրանց վերապատրաստումը , աշխատանքի նոր ձևերի կիրա-
ռումը ցանցի վորոջ ողակներում , մի բանի շրջաններում կու-
սակցութեան թեկնածուների 100 տոկ . ներգրավումն կուս-
կրթութեան ցանցում (Աբարան , Բայազետ , Թալին , Գորիս ,
Ալլահվերդի , Աշտարակ և այլն) , կոմհամայնարանի կադմա-
կերպումն իր հեռակա և գիշերային բաժանմունքներով , ա-
մառային ցանցի հաջող ծավալումը տեղերում և այլն) :

Սակայն Կենտկոմի Բյուրոն նշում և , վոր կուսուսուցման
նեղիկ դրութեանը հետո յե կուսակցութեան աշխատանքների
վերակառուցման հտապի և մասսաների կուլտուր-բաղաճա-
կան ահող պահանջներին բավարարելուց :

Բյուրոն ընդգծում է, վոր կուսակցական ուսուցման ասպարեզում կան մի շարք կարևոր բացեր ու թերություններ, վորոնցից հիմնականներն են՝

ա) Չնայած կուսակցական վերադաս մարմինների գերեկտիվներին, կուսակցական կազմակերպությունների վորոշ ողակներում (Ղամարլու, Վեդի) դեռևս նկատվում են մարքս-լենինյան թեորիայի և դաստիարակության ոպորտունիստական թերազնահատման դեպքեր, վորոնց դեմ չի ծավալված մասսայական բայլչեիկյան պայքար:

բ) Կուլտ-պրոպ և ազիտ-մաս սաթինների (ներառյալ Կենտկոմի) գործունեյության անբավարար վերակառուցումը և ոպերատիվ դեկավարության թուլությունը կուսուսուցման ասպարեզում, մասնավորապես շրջկոմների կողմից:

գ) Ինքնահոսի առկայություն, գիմադրկություն, կատարածի թույլ ստուգումն և կենդանի մարդկանց վատ հաշվառն և հոսունությունը կուսուսուցման դժով:

դ) Վոչ-բավարար գիՖերենցիալ մտեցումն կուսուսուցման ցանցում սովորողներին, ծրագրերի և դասադրքերի հրատարակման գործի անկանոնությունը, կուսակցական թեկնածուական կազմի վոչ լիովին ընդգրկումը և հոսունությունն ունկնդիրների ու պրոպուժերի ասպարեզում:

ե) Ուսման վորակի անբավարար վիճակը, թվերի հետեից ընկնելն այստեղ ևս ու լենինիսիսի խեղաթյուրման և կուսադժի աղճատման դեպքեր ուսման ցանցում (Արթիկ, Յերևան, Լենինական, Բասարգեչար, Աշտարակ և այլն):

զ) Թեորիայի վոչ-լիակատար շաղկապումն պրակտիկայի և կուսակցական հերթական խնդիրների հետ. պրոպագանդիստական ուժերի տեսական մակարդակի ցածրությունը և նրանց վոչ-սիստեմատիկ հաշվառքը և ուսուցումը:

է) Միանդամայն անմիթար վիճակ է ցույց տալիս ազգային փաբրամանության մեջ գործող կուսակցական ուսումնական ցանցը:

ը) Կուսակցական մարմինների վոչ-սիստեմատիկ և անբավարար դեկավարությունն ու հսկողությունը կոմյերիտ-

միության մարքս-լենինյան դաստիարակության գործում:

Յենելով վերոշիշյալ դրությունից՝ ՀԿ (Բ) Կ Կենտկոմի Բյուրոն վարչում է՝

1. Համարելով անթույլատրելի կուսուսուցման աշխատանքների ու դերի թերազնահատումը վորոշ կազմակերպությունների (Ղամարլու, Վեդի և այլն) կողմից՝ առաջարկել բոլոր քաղկոմներին և մասնավորապես շրջկոմներին անողոք պայքար մղել մարքս-լենինյան դաստիարակության դերի և նշանակության ոպորտունիստական թերազնահատման դեմ:

2. Հիչեցնելով այն փաստը, վոր կուսակցական կազմակերպությունները շատ հաճախ ընկնում են թվերի հետեից, և կուսակցական ուսուցման անբավարար վորակի առկայությունը՝ Բյուրոն առաջարկում է բոլոր կուսակազմակերպություններին քանակական աճին զուգընթաց ուշադրության կենտրոնում վերցնել մարքս-լենինյան դաստիարակության վորակը, դնելով այն կուսաշխատանքների վերակառուցման շրջանի սահանջների մակարդակին:

3. Բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ ամենակարճ ժամանակամիջոցում վերակառուցել կուսուսուցման ցանցի բոլոր միավորների գործունեյությունը, ծանրության կենտրոնի փոխադրելով դեպի ցեխը, բրիգադը—արտադրական և կուսակցական ստորին միավորները, առանձնակի ուշադրություն դրածնելով կենդանի մարդկանց ճանաչման և վերջիններիս բայլչեիկոբեն կոփելու կարևորագույն խնդիրն:

4. Երջկոմների և քաղկոմների կուլտ-պրոպ և ազիտ-մաս բաթվարներին՝ յերկու դեկադի ընթացքում կազմակերպել պրոպագանդիստական առկա ուժերի լիակատար և ճշգրիտ հաշվառք, նրանց պատրաստումը և վերապատրաստումը դարձնել սիստեմատիկ: Մոնվազն 15 որը մեկ անդամ, հրավիրել պրոպուժերի սեմինարներ նրանց տեսական մակարդակը բարձրացնելու և մեթոդական դեկավարությունը սպահովելու համար:

Ընդդեմելով, վոր ուսման վորակը պայմանավորված է պրոպագանդիստների և լեկտորների վորակով, Բյուրոն կուսակազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում պրոպագանդիստ խիստ ընտրության, նրանց հոգաճար վերաբերմունք ցույց տալու և աշխատանքի մաքսիմալ պայմաններ ստեղծելու խնդրի վրա:

5. Բյուրոն հատկապես ընդդեմ է, վոր Հայաստանի կուսակցական կազմակերպությունները դեռ լիովին չեն կիրառել Համկ(բ)Կ ԿԿ 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումը կուսակցականներին, հատկապես գյուղական կոմունիստներին ու նամանավանդ թեկնածուներին գլխովին կուսուսուցման ցանցում ներգրավելու վերաբերյալ. ուստի առաջարկել բոլոր շրջկոմներին մինչև ոգոստոսի 20-ը լայն կերպով ծավալել ամառային կուսակցական ուսուցման ցանցը, ներառելով վերջինումս գյուղական բոլոր կուսակցականներին, և մշակել կոնկրետ ձևեր վերջինների քաղաքական-գաղափարական կոմպոզիցիան ավելի ևս բարձրացնելու համար:

6. Առաջիկա ամսան և աշնան ցանցի կոմպլեկտավորման գործում հանդես բերել առավելագույն դեֆերենցիալ մոտեցում. հաշվի առնելով ունկնդիրների կրթական, քաղաքական մակարդակը, բանավորների հերթավորությունները, տարբեր արտադրական միավորների սպեցիֆիկ պայմանները և անդամ ունկնդիրների բնակարանային յուրահատկությունները, տեղական կազմակերպությունները պետք է մինչև վերջն ուղղեն ցանցի կոմպլեկտավորման ասպարեզում կատարված սխալները և վերացնեն նկատվող շարքերը:

7. Բյուրոն զգուշացնում է բոլոր կուսակազմակերպություններին, վոր կուսակցական ուսումը պետք է ընթանա տարվա բոլոր յեղանակներին և յուրաքանչյուր փորձ գանազան կամ պանյանների պատրվակով դաստիարակության սիստեմի աշխատանքները կատեցնելու գծով Կենտկոմի կողմից կարծանանա ամենատեղ հակահարվածի:

8. Նշելով կուսակցական բարձր և միջին ակտիվի տեսական պատրաստականության գործի անմխիթար վիճակը, Բյուրոն առաջարկում է ԿԿ Կուլտ-պրոպ բաժնին մեկ ամսվա ընթացքում մշակել կոնկրետ ծրագիր ակտիվի սիստեմատիկ պատրաստության համար: Սեպտեմբերին տեղերում հրավիրել ակտիվի սեմինարներ և կուսկոնֆերանսներ 17-րդ կուսկոնֆերենցիայի և կուսակցության առաջ ծառայած հերթական խնդիրները մշակելու նպատակով: ԿԿ Կուլտ-պրոպ բաժնին՝ սիստեմատիկ դարձնել կենտրոնի ուժերով տեղերում տեսական ղեկուցումներ կազմակերպելն ակտիվի համար:

9. Բոլոր կուլտ-պրոպ և ագիտ-բաժնիներին՝ ավելի լայն ծավալել դաստիարակության ցանցում սոցմրցումն ու հարցուցումները դաստիարակության ցանցում կիրառելու հավաճանությունը, մասսայական պայքար ընկ. Ստալինի Շմար: Սեպտեմբերին կազմակերպել հանրապետական մրցանակաբաշխություն կուսուսուցման գործն ուրինակելի կազմակերպելու նպատակով:

10. Դաստիարակության ցանցին մեթոդական և ծրագրային ղեկավարություն ապահովելու նպատակով առաջարկել բոլոր կուսկոմիտեներին կազմակերպել կուսկարիներներ և կոմիտեներին կից կազմակերպել կուսուսուցման բյուրոներ և կոմսուլտացիաներ:

Առաջարկել ԿԿ Կուլտ-պրոպ բաժնին յերկու գեկադում կազմակերպել մեթոդ-բյուրո և ելեկտրական լամպներ տեղերի վրա կոնկրետ ղեկավարություն ապահովելու համար:

11. Բոլոր կուսարգկոմներին և շրջկոմներին՝ առանձնակի ուշադրություն դարձնել նորակառույցների, ՄՏԿ և խորհրդակցությունների բանվորական կադրերի քաղաքական պատրաստականության գործի վրա:

12. Կենտկոմի Բյուրոն պահանջում է բոլոր կուսկոմիտեներից՝ ամենակարճ ժամանակամիջոցում ստեղծել իսկական բեկումն կոմյերիտմիության մարքս-լենինյան դաս-

տիրարակութեան գործում, ոգնելով կոմյերիտմիութեան կոմիտեաներին պրոպագանդիստներով, նյութապես և ապահովել անհրաժեշտ կուսակցական ղեկավարութեանն այդ գծով:

13. Մինչև 1933 թվի հունվարի 1-ը բոլոր շրջաններում բացել պրոպագանդիստներին կեսից — մեկ ամսյա դասընթացներ:

14. Խնդրել Անդրյեբեկովին այդ նպատակով բաց թողնել անհրաժեշտ գումար:

14. Բոլոր կուսակազմակերպություններին՝ մեկ ամսյա ընթացքում ստեղծել բեկումն ազգային փոքրամասնութեան շրջաններում տարվող մարքս-լենինյան դաստիարակութեան սիստեմում: Կոոպիլուլտ-առին՝ մեկ գեկազի ընթացքում կարգավորել ազգ. փոքրամասնութեանը ունեցող շրջանների գրականութեան առաքման գործը:

15. Շեշտելով տեղական թերթերի անբավարար մասնակցությունը մարքս-լենինյան դաստիարակութեան գործում՝ առաջարկել բոլոր թերթերի խմբագրություններին հատուկ և սիստեմատիկ ուշադրություն դարձնել մարքս-լենինյան դաստիարակութեան խնդիրներին, վերցնելով թեկնածուների ուսուցման տեսական շեֆությունը: Անպայման ունենալ թեորետիկական ուսուցման և կոնսուլտացիաների հատուկ բաժին թերթում:

16. Կի Կուլտ-պրոպ բաժնին՝ տանել նախապատրաստական աշխատանք Լենինականում յերեկոյան կոմհամարսարան կազմակերպել (1933 թ. հունվարից), ինչպես նաև 2-րդ աստիճանի կուսգործներ ունենալու Աբարանում, Դիրիջանում, Ղափանում և Բայազետում:

17. Առաջարկել կուլտ-պրոպ և ազիտ-մասվարներին՝ կարգավորել, ծավալել հեռակա կոմհամարսարանի աշխատանքները:

18. Հոկտեմբերի 1-ից կազմակերպել ակտիվի հանրապետական 3-ամսյա ուղիորդասրնթացներ: Կուլտ-պրոպին տանել նախապատրաստական աշխատանքներ այդ գծով:

19. Արդեւել մեկ տարով վարձու պրոպագանդիստներին ուրիշ աշխատանքի վերցնել:

20. Կուլտ-պրոպ և ազիտ-մասվարներին՝ հետևել, վորպեսպի կուսուսուցման սիստեմում ապահովվի տեսպրոպագանդի միջնորդի ավանդումը:

21. Բոլոր շրջկոմներին և քաղկոմներին՝ ծավալել նախապատրաստական ձեռնարկումները 1932-33 աշնան-ձմեռային ուսուցումն ապահովելու համար: Պետհրատին՝ հերթից դուրս տպագրել կուսուսուցման ցանցի նյութերը, այդ գործի համար պատասխանատու դարձնել ընկ. ընկ. Պարխին և Մարուխյանին:

22. Խիստ հանդիմանություն անել Ղամարլվի շրջկոմի բյուրոյի ամբողջ կազմին և խիստ նկատողություն կուլտ-պրոպ ընկ. Հովհաննես Պետրոսյանին, 1931-32 թ. աշնան-ձմեռային կուսուսուցման ցանցի աշխատանքները տապալելու համար: Առաջարկել շրջկոմին ձեռք առնել կտրուկ միջոցներ անխնա առաջ տանելու մարքս-լենինյան դաստիարակութեան գործը:

23. Առաջարկել կուլտ-պրոպին վերանայելու կուսուսուցման ծրագրերն ու գրականությունը ընկ. ՍՏՍՍԻՆԻ պատմական նամակի վողով՝ հատուկ ուշադրություն դարձնելով կուսպատմության և լենինիզմի ավանդման վրա, դաշնակիրի և նացիոնալիզմի յերեույթներին, հակահեղափոխական տրոցկիզմի կոնտրարանդի, աջ և «ձախ» ոպորտունիզմի դեմ սյքարն ել ավելի սրելու խնդրի վրա, վարելով կոնկրետ պայքար ցանցում յեղած՝ լենինիզմի աղճատման և դոեհկացման դեպքերի դեմ, ապահովելով յերկու Ֆրոնտով պայքար մղելու բայլչևիլյան լոգունդի անչեղ կենսագործումը:

24. Հաստատել Կուլտ-պրոպ հանրապետական խորհրդակցությունից կուլտ-պրոպի վորոշումը:

ՇՐՋԱՆՈՒՆԵՐԻ ՑԵՎ ՔԱԿԿՈՄՄՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Ձեռք բերված		Պատվարային				Պատվարային		Պատվարային		Սոց. դրուսյուն			Արդյունք		
	Ձեռք բերված	Պատվարային	Պատվարային	Պատվարային	Պատվարային	Պատվարային	Պատվարային									
1. Դուրսագրություններ	31	781	288	250	142	392	145	244	243	473	62					
2. Աշտարակ	21	508	71	147	121	268	18	88	16	3	30	488	20			
3. Բասարգեղանի	21	694	44	115	85	200	18	271	16	164	470	60	328	366		
4. Արթինի	18	675	175	475	50	525	60	90	375	250	50					
5. Իջևան	36	726	88	295	80		95	256	40	596	85					
6. Վարդաշատ	40	1000	200	300	200	500	50	300	100	600	150	800	100	60	40	
7. Վեդի	22	745	30	143	172	315	10	102	19	328	19	106	324	421		
8. Աղարանի ձմեռային	25	721	35	172	111	238	28	309	5	129	1	687			34	
9. Երևան	32	800	75	219	132	351	43	246	10	167	633	717			83	
10. Սեբաստի	24	650	65	250	68	318	19	182	14	112	442	96	539	111		
11. Ցեղանի քաղաք	93	2676	441	1243	435	1678	211	739	152	1671	44	960	2535	74	59	7
12. Լեռնականի քաղաք	144	4009	416	1104	904	2008	639	1362	2437	1212	399	3941	25	43		

13. Ստեփանավանի քաղաք	30	866	210	133	343	186	335	129	542	195	604	35	226				
14. Մարտունի	18	516	82	166	80	216	17	170	20	130	39	492			4	20	
15. Քաղնի	28	757	60	167	108	245	16	213	8	269	22	105	59	685	52	20	
16. Երևանի քաղաք	26	577	74	217	81	298	141	139	206	307	64	576	1				
17. Կոտայի	33	822	101	293	06	479	209	300	101	198	595	39	748				
18. Շամաղի	16	533	60	185	84	269	27	114	24	150	9	458	2	533			
19. Գարիսի	29	769	73	386	180	576	49	105	17	98	7	31	560	173	717	52	
20. Աղարակ	16	358	68	81	150	6	123	12	81	356	2	255	101				
21. Ցեղանի քաղաք	19	469	29	86	83	169	12	136	13	161	6	8	138	53	344	125	
22. Ղարաբեկասի	41	1385	479	231	720	282	383	707	484	193	1372	6	2	5			
23. Գլխիջանի	29	900	107	189	140	329	270	301	194	579	197	625	236	39			
24. Ղաթանի	34	1231	264	564	145	709	92	224	20	408	739	84	1071	160			
25. Ախտալի	18	561	9	181	63	234	5	177	4	140	543	10	8				
26. Փաշալուխ	9	195	15	43	38	81	9	48	4	66	2	19	27	149	159	36	
27. Ալլանի քաղաք	59	1561	443														
ԸՆԴՈՒՄ ԵՐԸ	912	26985	2792	7975	4039	11376	630	7447	474	7940	11537	3253	19	82	1921	463	197

ՇՐՋԱՆՆԵՐԻ ՑԵՎ ԳԱՂՈՍՏՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Պրոպագանդայի օրեր	Կառ. ստան			Կրթ. վարձ			Պրոպ. ստան			Մուլ. արձեւում			Ազգ. վարձ								
		20-ից մինչև 24 Ք.	24-ից մինչև 28 Ք.	28-ից մինչև 31 Ք.	Լրացանք	Ինքնակրթություն	1 աստի կուրս	1 աստի կուրս	1-2 աստի	2-4 աստի	մյուս միջին	մասնավոր	համապատասխան	հարկ	հարկ	հարկ						
1. Կոմիտաս	25	1	1	10	8	9	4	1	1	7	3	3	3	4	4	25	2	-				
2. Կոմիտաս	24	3	4	17	5	3	6	3	8	10	1	5	1	2	2	22	2	1				
3. Կոմիտաս	14	1	4	5	5	2	2	5	3	6	1	4	8	2	2	14	-	-				
4. Կոմիտաս	28	1	3	4	10	4	5	4	13	7	3	2	5	8	28	3	1					
5. Կոմիտաս	106	20	10	34	42	11	33	42	20	19	31	26	10	7	52	102	3	1				
6. Կոմիտաս	13	1	1	11	-	2	8	2	2	12	8	2	1	3	9	1	11	2				
7. Կոմիտաս	29	2	3	14	10	2	2	3	2	19	19	13	13	17	1	4	28	1				
8. Կոմիտաս	41	6	21	12	21	4	14	2	2	19	6	2	4	21	5	8	5	20				
9. Կոմիտաս	24	-	4	20	18	4	2	9	6	8	10	2	4	2	5	20	4	-				
10. Կոմիտաս	36	1	4	12	19	17	1	4	9	-	-	-	-	-	-	35	6	2				
11. Կոմիտաս	30	1	5	9	6	25	3	1	1	-	-	-	-	-	-	22	6	1				
12. Կոմիտաս	9	-	7	2	3	-	2	4	-	-	-	-	-	-	-	3	3	5				
13. Կոմիտաս	20	1	4	19	6	4	2	2	1	8	4	3	10	5	2	1	11	9				
14. Կոմիտաս	13	-	6	7	-	11	1	1	2	2	1	2	3	9	4	3	1	13				
15. Կոմիտաս	29	-	10	19	8	6	11	2	2	10	15	4	3	3	15	1	7	29				
16. Կոմիտաս	10	-	6	4	2	3	4	5	8	9	1	3	2	4	-	1	9	1				
17. Կոմիտաս	12	-	1	9	5	4	3	4	8	9	7	3	2	4	3	2	19	-				
18. Կոմիտաս	34	2	17	8	10	12	7	4	1	15	8	11	4	1	8	3	3	13	34			
ԸՆԴԱՄԱՆԸ	422	30	40	179	231	157	80	88	123	48	258	135	113	76	63	164	60	32	105	164	33	4

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Պ. ՄՅԱՆԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0184666

9472 60 409

А. АДОЯН
ОСНОВНЫЕ ВОПРОСЫ МАРКСИСТКО-ЛЕНИНСКОГО
ВОСПИТАНИЯ

ИЗДАТЕЛЬСТВО Ц. К. К. П. (6.) А.

Партиздат 1932 г. Эривань